№ 1 (237) XXIV ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1914

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENEVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

1913—1914

„Բալկանեան տարին" էր, նմանը վաղուց չտեսնուած մի թուական։ Երբէք արևելեան խնդիրը այնքան դող ու յուզմունք չէր պատճառել ալևոր Եւրոպային, երբէք—1453 թուականից ի վեր—Թիւրքիան չէր ապրել այնքան ուժգին սասանումներ։ Նոր, երիտասարդ պետութիւններ բուռն կատաղութեամբ բեմ նետուեցին, և մի վայրկեան կար, երբ հիւանդ, զառամեալ վիթխարին, այնքա՜ն դարեր խնայուած ու պահպանուած միջպետական անդուլ հակամարտութեան շնորհիւ, թուում էր կործանման անդունդի եզրին, խորտակւում էր բալկանեան դաշնակիցների ջախջախիչ գրոհի տակ։

Այդպէս չ'եղաւ, սակայն, բախտը միանգամ ևս ժպտաց Մահիկին, հակամարտութիւնը վերստին ծայր աւեց նրա քրիստոնեայ ոսոխների միջև, երէկուայ հպարտ, յաղթական բուլգարը յետ նահանջեց ջարդուած, ուժասպառ, իսկ նրա ոտքերի տակ քիչ առաջ գալարուող տաճիկը նորէն գրաւեց իր եւրոպական հողերի մի մասը, նորէն ամրացաւ իր երկրորդ մայրաքաղաք—Ադրիանուպոլսում։

Վերջացա՞։ Քաղաքական հրաբուխը մարե՞ց, թէ մեզ տակաւին վիճակուած է նորանոր ժայթքումներ տեսնել առաջիկայ գարնան... Ոչ ոք կարող է գուշակել։ Ամեն ինչ շարունակւում է և ոչինչ չի վերջանում։ Ցմոտ ու արիւնոտ հոսանքը դադար չպիտի առնէ, մինչև որ ազգերը—բոլո՛րը—չգոհացնեն իրեն յարաբորբոք ախորժակները, մինչև որ չհաստատուի արևելեան չարաբախտ երկնքի տակ բաղձալի հաւասարակշիռը։ Եւ՞ երբ կը հաստատուի նա...

Կացութիւնը մռայլ է, նոյնքան մռայլ, որքան անցեալ տարի նոյն այս վայրկեանին։ Մեծ պետութիւնները, որ իրենց հակամարտ խմբակցութիւններով հրահրում էին արևելեան այդ հսկայ յեղաշրջումը, գալոց աւարի ակնկալութեամբ, այսօր ևս տենդով մրցում են նոյն բալկանեան և օսմանեան կրկէսի մէջ, յղանում են նորանոր ծրագիրներ, ընդլայնում են իւրաքանչիւրը իր „ազդեցութեան շրջանը"։

Մի վայրկեան, սլավոնականութեան և հելլենիզմի անդիմադրելի սլացքի առջև՝ երկպէտական դաշնակցութիւնն էր յաղթական քրքիջ արձակում... Գերմանիան էր, որ պարտւում էր Կրբի-Քիլիսէի վիթխարի մարտակրկէսում, գերմանական ռազմաբեստն էր յետ մղում ֆրանսիականի առջև, Աւստրիան էր, որ խոցոտւում էր Կումանովոյի դաշտերում, Իտալիան էր, որ յետ էր նահանջում Էպիրոսի սահմաններից և Էգէեան ջրերից։ Եղբեպետեան դաշնակցութիւնը և մասնաւորապէս Բերլինը նուաստանում էր, կանգ առնում իր պատմական Drang-ի մէջ, իր տենդային առաջխաղացութեան ճանապարհին՝ դէպի Օսմանեան Արևելք։ Այդ նպատակով էր արդէն սարքուած Պետերբուրգի դիւանագիտական կաբինէի մէջ՝ Բալկանեան զինակցութիւնը։

Բախտի անիւը շուռ եկաւ յանկարծ։ Ցաղթող բուլգարը մէկէնիմէկ դարձրեց իր զէնքը սլավ դաշնակցի դէմ, սերբ ու բուլգար իրար յաշտեցին, սլավոնականութեան ներդաշնակ ուժը խորտակւեց և այժմ արդէն քրքջացողը գոռոզ Ցեւտօնն էր, որ բերկրանքով դիտում էր իր օսմանցի հովանաւորեալի վերադարձը դէպի Էտիրնէ։

Եւ նորէն ահա Բերլինը տէր օսմանեան ճակատագրի. ահա նա ամուր խարիսխ է ձգում Բոսֆորի մէջ, իր ձեռքն է առնում նրա բանալին, դուրս վանելով Կ. Պոլսից բոլոր միւս մրցակիցներին, դուրս մղելով անգամ Ռուսաստանը, որ պետրոսեան օրերից ի վեր երազել ու հետապնդել է այդ անզուգական Դիրքի նուաճման և որ նոյն մտահոգութեամբ արգելել էր յաղթական բուլգարին՝ մտնել այնտեղ...

Գերմանիոյ առջև վերստին բաց են Թիւրքիոյ բոլոր ճամբաները — Կ. Պոլսից մինչև Կիլիկիա և Բաղդադ նա բաց է անում հարաւային Անատոլուի մէջ մի փոքրիկ Բաղդադ ևս (Ադալիա) իր դաշնակից Իտալիայի համար։ Եւ այն աստիճան առաջ են անցնում Բերլինի յաւակնութիւնները, որ անգամ Թիւրքահայաստանը, որ մինչև այժմ համարւել է բացառապէս ռուսական ազդեցութեան վայր, ենթարկւում է կիսով չափ գերմանական ազդեցութեան, և հայոց ճակատագիրը այսօր տնօրինւում է ռուս-գերման համաձայնութեամբ։ Դարձեալ մի անգամ Ռուսաստանը ստրջանում է իր ուժեղ դրացու առաջ, նա չի կարող իր ձայնը ազդու կերպով հնչեցնել Սամսունի մէջ, նա անզօր եղաւ Ադրիանուպոլիսը վերադարձնել տալ բուլգարներին, նա այսօր էլ

անզօր է ընդունել տալ հայկական ռէֆօրմների սկզբունական նախագիծը, որ դարձել է ոչ միայն շահու, այլ և մի տեսակ պատուոյ ու հմայքի խնդիր Պետերբուրգի կառավարութեան համար։

Կործանուում է Գերմանիայի այդ պողպատեայ ճնշման տակ ոչ միայն ռուսական պրեստիժը Կ. Պոլսում ու ամբողջ Արևելքում, կործանուում է ֆրանսիականը և անգամ անգլիականը։ Երկու մեծ արևմտեան պետութիւնները, որ դարերից ի վեր այնքան հմայք ու ազդեցութիւն են ունեցել սուլթանների մայրաղաքում, այսօր մի անհասկանալի մեղկութեամբ carte blanche են տալիս Վիլհելմ II-ի կառավարութեանը ոչ միայն հայոց հարցում, այլ և ամբողջ Թիւրքիոյ բախտը տնօրինելու գործում։ Նրանք կուզեն, որ Ռուսաստանը, իբրև աւելի շահագրգռուած պետութիւն, իր վրայ առնէ նախաձեռնութիւնը՝ որոշ հարցերում „վճռական ժեստեր“ անելու գերմանական սպառնալիքին սպառնալիքով պատասխանելու... Բայց Ռուսաստանն էլ, ներքուստ անդամալուծուած, սարսափում է „վճռական ժեստերի“ հնարաւոր հետևանքներից և ճիգ է թափում, յաճախ ծանր զոհողութեան գնով, պահպանել խաղաղութիւնը։

Բերլինը զգում է այդ և միշտ աւելի ու աւելի բարձրացնում է իր ձայնը։ Նա իր ձեռքն է առել իտիհատական խամաճիկներին, տիրել է նրանց սրտին ու ուղեղին, խոստանում է նրանց՝ յաւերժացնել Թիւրքիոյ գոյութիւնն և իտիհատական տիրապետութիւնը ընդդէմ արտաքին ու ներքին թշնամիների, բայց իրօք նախապատրաստում է իր ապագայ „Եգիպտոսը“, այժմից արդէն ցանցապատում է երկիրը իր անտեսական ձեռնարկներով, այժմից արդէն իր ձեռքն է առնում ոչ միայն զօրքի կազմակերպութիւնն ու մարզումը, այլ և նրա գերագոյն հրամանատարութիւնը...

Մեծ, ահարկու չափով աճեց վերջին տարեայ ընթացքում Գերմանիայի հմայքը ոչ միայն Թիւրքական արևելքում, այլ ամբողջ աշխարհում։ Եւ որքան աւելի է նա դառնում ահեղ ու սպառնական, այնքան աւելի է զարկ տալիս իր զինուորական ուժերին, իր բանակին։ Ռայխստագը, չնայած իր 111 սոցիալ-դեմոկրատներին, հնազանդութեամբ ընդ առաջ է գնում կառավարութեան յարաճուն պահանջներին... Մեր ժամանակի ամենանախուր երևոյթներից մէկն է գերմանական պարլամենտի այդ թուլամորթ, կրաւորական համակերպութիւնը, որ անհաշիւ աղէտներ է ծնում համաշխարհային քաղաքակրթութեան համար։ Դրա շնորհիւ է, որ բիսմարկեանութիւնը դառնում է միշտ աւելի յանդուգն ու ամբարտաւան, որ շարունակ աճում է միլիտարիզմը Գերմանիայում, յարուցանելով նոյն ռազմական ու շովինիստական տենդը բոլոր ուրիշ երկրներում։ Այսօր աւելի քան երբևիցէ, Գերմանիան մի սպառնալիք է միջազգային խաղաղութեան համար, նա սպառնալիք է ամենից առաջ իր թոյլ դրացու՝ Ֆրանսիայի համար։ Այդ է պատճառը, որ նախորդ տարեայ ընթացքում այնքան վշտալի զօդանջով հնչեց ֆրանսիական „ալարմը“, սկսեց ամբողջ Ֆրանսիայում բուռն ագիտացիա, ի տես գերման ռազմական պատրաստութիւնների, և պարլամենտը բաւական ստուար մեծամասնութեամբ որոշեց նորէն մտցնել զինուորական եռամեայ ծառայութիւնը, որ 1905-ից վերածուած էր երկամեայի։

Անդուլ, անհնարին ճիգերով դիւանագիտութիւնը կարողացաւ—շնորհիւ գլխաւորապէս սիր Էդուարդ Գրէյի վարպետութեան—փրկել վերջին 15 ամիսներում եւրոպական խաղաղութիւնը, որ երբեմն մազից էր կախուած։ Ցարակոյս չկայ, որ բոլոր պետութիւնները, անգամ Գերմանիան ներշնչուած են էապէս խաղաղ տրամադրութեամբ, բոլորին էլ դող է պատճառում ապագայ խօլ բաղխումների հեռապատկերը և բոլորն էլ խոյս են տալիս ընդհարումից, աճեցնելով հանդերձ շարունակաբար իրենց բանակն ու նաւատորմը և սպասելով „ճակատագրական“ վայրկեանին... Այո, այնուամենայնիւ, հնարաւոր է, որ պատերազմը պայթէ որևէ առթիւ, հնարաւոր է, որ հրդեհը, մի անգամ ևս արծարծելով Բալկաններում, տարածի ու բռնէ ընդարձակ հորիզոններ...

Այդ պատահականութիւնը ամեն օր և ամեն վայրկեան ներկայ է մրցակից պետութիւնների աչքերի առջև, քանի որ, տարաբախտաբար, „առիթները“ չափազանց շատ են, գժտութեան ու բաղխումի սաղմերը՝ անհաշիւ։ Ոչ Լոնդոնի դեսպանաժողովը, ոչ Բուքրէշի խաղաղութեան դաշինքը, ոչ էլ բոլոր մասնակի դաշինքները բնաւ չլուծեցին արևելեան վիթխարի կնճիռը։ Թիւրքիան, քաջալերուած Ադրիանուպոլսի իր դիւրին յաղթանակով, յանդգնացած գերմանական աջակցութեամբ, ուզում է շարունակել „ոբվանշի“ ուղին, ձգտում է նորէն դէպի Մակեդոնիա, ճօճում է սուրը Յունաստանի դէմ։ Բուլգարիան, խոցուած, արիւնահոս, վրէժը սրտում, պատրաստ է ձեռք մեկնել անգամ իր անհաշտ, դարաւոր ոսոխին, Թիւրք կառավարութեան, ընդհանուր ուժերով սերբին ու յոյնին հարուածելու համար։ Սերբիան, Յունաստանը մնում են անստոյգ ու անհանգիստ վիճակում, առաջինը դեռ շարունակում է դողալ Աւստրիայի առաջ, երկրորդը ստիպուած է վերստին լարել իր ուժերը, երկիւղ կրելով Թիւրքի, բուլգարի հաւանական յարձակումներից։ Եւ այդպիսով յարատևում է բալկանեան շփոթը, յարատևում է սպառազինման տենդը, պահելով ամբողջ Եւրոպան նոր, ահաւոր բռնկումների մշտնջենական երկիւղի տակ։

***

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ։—Յոյսի և ճիգի տարի էր մեզ համար։ Աղքա՜տ էր այդ ճիգը, ինչպէս միշտ նա լիովին չէր

համապատասխանում վայրկեանի մեծ պահանջին։ Հայ բուրժուազիան, ինչպէս միշտ, այս անգամ ևս—հայկական խնդիրը առաջ քշելու և ժողովուրդը փրկելու համար—աչքերը յառեց դէպի Եւրոպա, դիւանագիտական դաշինքները, միանգամայն արհամարհելով հայաստանցու ամենակենսական, ամենահրատապ պահանջները և ամենից առաջ ինքնապաշտպանութեան գերագոյն պահանջը։ Միշտ այդպէս... Նաւագոյն ճիգի ուղղութեամբ են ընթացել ազգի ճակատագիրը վարելու յաւակնող դաշակարգերը... Նաւագոյն ճիգ և նաւագոյն զոհողութիւն... Ազգային ժողովը կը ճառէ, երբեմն կը փոթորկի, սպառնական ժեստեր կանէ կառավարութեան հասցէին, պատրիարքը պարբերաբար կ'երթայ Դուռը, կուղղէ նրան իր թագրիները, թարգման կը լինի հայկական պարլամենտի բողոքի ու ցասման և անվերջ, յաւիտենօրէն կը խաղացնի այդ ողբալի կատակերգութիւնը և մեր թուլամորթ ամբոխ-հասարակութիւնը երբէք մի վայրկեան չի զգաստանայ, չի ըմբռնի, որ այդ խրոխտ ժեստերն ու սպառնական դիմումները չեն կարող յանգիլ դրական արդիւնքի և միայն ծիծաղ ու արհամարհանք կը շարժեն, եթէ նրանց տակ չկայ իրական, նպիրագործող ուժը, եթէ հայ ժողովուրդը կը մնայ միշտ անզէն ու անպաշտպան պարիահի վիճակում։

Աղքա՞տ է հայ ազգային ճիգը, աղքա՞տ է, ողորմելի է հայ բուրժուազիան իր հաւաքական ամբողջութեան մէջ, իր զոհողութեան ընդունակութեամբ, իր ռիսկի ծաւալով... Որքա՞ն գծուծ ու գաճաճ է նա, համեմատած յոյն բուրժուազիայի հետ, որի վրայ սակայն նա սովոր է բարձրից նայել, մի տեսակ արհամարհոտ ամբարտաւանութեամբ... Յիշեցէք թէ ինչ վիթխարի չափերով յոյն հարուստները մանաւանդ Դիասպօրան, յոյն գաղութները, օգնութեան հասան մայր-հայրենիքին, որպիսի առատութեամբ նրանք անցեալ տարի զոհաբերեցին իրենց դրամը ազգային գործին։ Յիշեցէք յոյն հարուստների նիւթական զոհողութիւնները անցեալի մէջ, Յունաստանի ազատագրական շարժման օրերում...

Կատաղում էք և տառապում ամօթից ու ցասումից, երբ հայրենասիրական այդ գեղեցիկ թռիչքների հանդէպ մտաբերում էք մեր գծծի ու փոքրոգի Արպագօնների դասակարգը, որ գիտէ միայն սողալ ու մուրալ, գիտէ միայն գործելու ոժան ճանապարհը, գիտէ փարել դիւանագիտական ֆէտիշներին, առանց երբէք ձգտելու ուժ ստեղծել երկրի մէջ, դիմադրական փրկարար ուժ... Այդ վերջին դաժան պարտականութիւնը մնում է դարձեալ հայ մարտական կազմակերպութեան շլինքի վրայ, որ իր համեստ, սահմանափակ միջոցներով ձգտում է գէթ յայտնի չափով ապահովել Հայաստանի ժողովուրդը՝ միշտ հնարաւոր ջարդերի սպառնալիքի հանդէպ։ Երկեւայ խուճապը կարնոյ մէջ նոր ապացոյց է այդ արիւնա՛ հնարաւորութեան...

Հ. Յ. Դաշնակցութեան վրայ, այո՛, ըստ առաջնոյն ծանրացած է մնում այդ նիւթական պարտականութիւնը՝ հսկել բուն երկրի մէջ ժողովրդի ապահովութեան վրայ, իր շատ համեստ ուժերով զսպել թշնամի հրոսակների արիւնատենչ ախորժակները։ Այդ ճամբու վրայ՝ մենակ է եղել նա 20 տարուց ի վեր և այսօր էլ մնում մենակ։ Այդ չի արգելում, որ „ազգը" իր պէս-պէս, խայտաբղետ „կուսակցութիւններով" դարձեալ շարունակ քննադատէ ու բարկոտէ „Դաշնակցութիւնը" և նոյնիսկ մի կարգ հռչակաւոր բախտախնդիրների բերնով „դաւաճան" հրատարակէ նրան։ Հայկական կեանքին յատուկ մի տխուր պարադոքս է սա, բայց դարձեալ դաշնակցականներն են, որ գիտակցելով հանդերձ հակառակորդ կուսակցութիւնների չկամութիւնն ու մեղկ կրաւորականութիւնը, տեսնելով հանդերձ նրանց յաւիտենական, անդարմանելի mauvaise foi-ն, համոզուած նոյնիսկ, որ ազգային քաղաքականութեան բուն, իրական պահանջների հանդէպ այդ կուսակցութիւնները՝ միևնոյն է՝ ոչ մի դրական աջակցութիւն չպիտի բերեն երկրի մէջ գործող ժողովրդական ուժերին, այնուամենայնիւ այսօր ևս ամեն տեղ, հայրենիքում ու Պոլսում, Եգիպտոսում ու Եւրոպայում շարունակում են համերաշխութեան իրենց բարոյը, յորդորում ու հրաւիրում են բոլոր դասակարգերն ու կուսակցութիւնները՝ համախմբելու ազգային ընդհանուր դատի շուրջը, չ'անարգելու հայկական դատը Եւրոպայի առջև՝ սին ու ամուլ պառակտումներով ու պայքարներով։ Կարո՞ղ է լինել աւելի այլանդակ ու ողբերգական մի կացութիւն...

Եւ դեռ նախորդ տարին ամենաերջանիկներից մէկն է համարւում։ Իրագործուեց կարելի է ասել, maximum-ը, գերագոյն չափը հայ ազգային համերաշխութեան։ Գէթ այսպէս կոչուած „դիւանագիտական" ձեռնարկների մէջ ազգը համերաշխ էր, շատ շատերը—լոկ խօսքով միայն։ Բուրժուազիան իր ամբողջ յոյսը դրել էր Պօղոս Նուբարի վրայ և սպասում էր քաղցր անդորրութեան մէջ, առանց իր գրպանը բաց անելու անգամ ամենախաղաղ ձեռնարկների համար։ Հազարերորդ անգամը շեշտուեց հայ մտայնութեան ծանօթ գիծը,—խօսքով ամենքը ազգասէր էին։

Բարեբախտաբար, Պօղոս Նուբարը յայտնուեց մի խոշոր ու տաղանդաւոր գործիչ և մեն-մենակ արեց աւելին, քան ամբողջ հայ բուրժուազիան։ Մէկ ու կէս տարուան իր անդուլ, հայրենասէր գործունէութեամբ, նա գրաւեց մի էջ հայ նորագոյն պատմութեան մէջ։ Տեղը և ժամանակը չէ ի յայտ բերելու այդ գործունէութեան մանրամասները, յիշատակելու այն խոշերը, որ նուպար հարթեց եւրոպական մի քանի դաշինքներում՝ իր կարող ու համոզիչ տրամաբանութեամբ՝ հայկական խնդրի կանոնաւոր ընթացքը ապահովելու համար։ Դեռ ցեռու ենք, անշուշտ, այդ ընթացքը կատարելապէս ապահովելուց,

դեռ չկարողացանք յօգուտ մեզ տրամադրել գերմանական դիւանագիտութիւնը, որ ունէ իր որոշ գործելակերպը, բայց այնուամենայնիւ, Նուպարի աշխատանքը Բերլինում ապարդիւն չպիտի անցնի։

Զենք բնաւ յիշատակում նոյն դիւանագիտական ասպարէզի վրայ „Դաշնակցութեան" ձեռքով կատարուած նոյնքան յամառ ու առայժմ աջող փորձերը, որոնցով նա ձգտեց լուսաւորել դիւանագիտութեան ղեկավարներին հայկական խնդրի ու պահանջների վերաբերմամբ և փարատել մի շարք վնասակար նախապաշարումներ։

Մենք պատրաստ ենք գոհունակութեամբ և նոյնիսկ խանդավառութեամբ արձանագրել և գրատել մանաւանդ այն գործերն ու դէմքերը, որոնք հրապարակ են գալիս մեր շարքերից դուրս և դրւում են ի սպաս մեր բազմաչարչար ժողովրդի։ Այդ կատէգորիային է պատկանում՝ Պօղոս Նուպարի անձնաւորութիւնը, որ չենք կարող չ՚ողջունել, իբրև մի երևոյթ մեր աղքատիկ իրականութեան մէջ, թէպէտ և տարաձութիւնը մեծ է նրա և մեր հայեացքների միջև։ Թո՞ղ լինին մեզ հակառակ, թող պայքարեն շիտակօրէն մեր գաղափարների ու տակտիկի դէմ, փո՞յթ չէ. որքան շատ լինին նրանք, այնքան լաւ, որովհետև իրօք յուսահատական է մարդկանց սովը, զարհուրելի է կարող, ձեռնհաս գործիչների պակասութիւնը մեր հայրենի բուրժուազիայի մէջ... Հակառակորդ մեր քաղաքական ու ընկերային գաղափարներով՝ մեզ միշտ յամենայն դէպս պիտի կապէ նրանց հետ շիտակ, անկեղծ հայրենասիրութիւնը, ազնիւ ու անձնուէր աշխատանքը յօգուտ հարազատ ժողովրդի բարօրութեան և ընդհանուր գիտակցութիւնը ազգային տարրական շահերի ու իրաւունքների։

Զմոռանանք և մեր ֆրանսիացի բարեկամների ու նրանց հիմնած Pro Armenia-ի ծառայութիւնները։ Չենք չափազանցնում նման օրգանների և առհասարակ „եւրոպական պրոպագանդի" արժէքը,—չենք էլ կարող, սակայն, ուրանալ նրանց որոշ կարևորութիւնը, ի նկատի ունենալով թէկուզ միայն այն հանգամանքը, որ Թիւրք կառավարական շրջանները վերին աստիճանի զգայուն ու ուշադիր են դէպի այն բոլոր քննադատութիւնները, որ գալիս են Պարիզից, դէպի այն բոլոր փաստերն ու մերկացումները, որ լոյս են տեսնում՝ ֆրանսիական օրգանի մէջ Հայաստանի կացութեան և օսմանեան քաղաքականութեան մասին։ Եւս առաւել, այդպիսի օրգանը անհրաժեշտ է այսուհետև, քանի որ գուցէ շուտով պիտի սկսեն գործադրել հայկական ռէֆորմների նախագիծը։ Անհրաժեշտ է ամենաարթուն հսկողութիւն երկրի մէջ, ամենախնամոտ արձանագրութիւն կատարուելիք դէպքերի ու զեղծումների։

Ի՞նչ չափով և որքա՞ն ժամանակով կը գործադրուին ռէֆորմները, ի՞նչ է սպասում Հայաստանի մէջ սահմանուած ազդեցութեան երկու վայրերին, ի՞նչ ծրագիրներ են որոշում ռուս ու գերման դիւանագէտները, ի՞նչ կը լինի առաջիկայ գարնանը, ի՞նչ նոր աղէտ կը պայթի Թիւրքիոյ գլխին,—ո՞վ կարող է գուշակել։ Առանց երկար տանջելու մեր ուղեղները ապարդիւն պրոգնոզներով ու մարգարէութիւններով, կատարե՞նք մեր պարտականութիւնը, մնանք ամեն վայրկեան գործի հրապարակի վրայ և որ ամենից անհրաժեշտն է՝ սիրտ ու թև՝ տանք երկրի ժողովրդին, տա՞նք նրան միջոց, հնարաւորութիւն ինքզինքը պաշտպանելու և այդպիսով առաջն առնենք այն լքումի ու յուսահատութեան, որի անխուսափելի հետևանքն է կործանարար, հայրենասպան գաղթը...

ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԷԺԽՆԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ

1912-ի աշնան Ռաֆայէլի եղերական մահուան և նրա հեղինակ Հաջի Եաղուբի ու իր ընկերներուն սպանութեան հանդէպ կառավարութեան ցուցուցած շիլ ու երկդիմի ընթացքը դրդեց հայ գիւղացիներուն՝ աւելի յարձակողական ուղղութեան հետապնդել գաւառներու մէջ պատուհաս դարձած աղաներու և պէկերու դէմ։ Կուզէին ադով ցուցնել միանգամայն կառավարութեան, որ հայերու վերաբերմամբ իր բռնած աչառու քաղաքականութիւնն ու հալածանքը չէ, որ զիրենք կարող է հանդարտեցնել և դատապարտել հնազանդութեան, այլ միմիայն անկեղծ սահմանադրական ընթացքը։

Ահա այդ դէպքերը, առանձին-առանձին, իրենց մանրամասներով։

Կարկառի Բերկրի գիւղի բնակչութեան մեծագոյն մասը հայ է, սակայն հոն կը բնակին նաև քանի մը տասնեակ քիւրդեր, որոնց մէջ իր չարագործութեամբ յայտնի Աբաս աղան։ Արդէն սահմանադրութենէն առաջ պատժուել էր Կարկառ շրջող խմբերու ձեռքով իր իսկ տան մէջ սպանուելով։ Ասոր երկու որդիներ, Կասըմ և Քեամիլ, որոշեցին իրենց հօր վրէժը լուծել սահմանադրութենէն վերջ, երբ յեղափոխական խմբերու սարսափը անհետացած համարեցին։ Նրանք սկսան հետապնդել ճանապարհորդ գիւղացիները, գանոնք կողոպտելու և սպանելու։ 1912-ի գարնան յաջողեցան, վերջապէս, սպանել իրենց գիւղացի ռէս Թովմասը։ Ասկէ զատ, երբ որ բազմաթիւ խորսրտինցիներ Հաջի Եաղուբի սպանութեան առթիւ բանտարկուեցան՝ երկու եղբայրները գիւղեր թափառելով, յաջողեցան սուտ վկաներու վոհմակ մը կազմակերպել, որով պատճառ եղան վերջին ծանր վճիռներուն։

Ասոնց ոճիրներուն հանդէպ չկարողանալով համբե-

բել, գաւառի երիտասարդներէն երկու ուսուցիչներ Մկրտիչ և Արշակ, օր ցորեկով կը յարձակին յիշեալ երկու չարագործներու վրայ և սպանելով լեռ կը բարձրանան։ Խղճիս գիւղ գտնուող ոստիկանախումբը, որը թէև մօտիկ էր դէպքին վայրին, սակայն սարսափէն հազիւ քանի մը բայլ հետապնդելով ետ կը դառնայ։

***

Խիզանի խորորոցի աշիրէթներէն Մրատի որդի Փաթանուն չարագործը բազմաթիւ ոճիրներ գործած է Կարճկանի Ուրանց գիւղին մէջ. միայն այդ գիւղի Ծերունի Տէր Սարգսի ընտանիքէն 6 մարդ խողխոզած և անոր 6 տարեկան որդին մորթելով դիակը գետը նետած էր։ Այս առթիւ Փաթաօ թէպէտ և բանտարկուած էր, բայց սահմանադրութեան հուչակումին վրայ քաղաքական յանցաւորներու շարքին մէջ ազատուած էր և անմօթաբար կ'երթևեկէր Ուրանց գիւղ։

Յիշեալ Տէր Սարգսի ընտանիքին պատկանող Մուրատանուն երիտասարդը, որոշում է վրէժխնդիր լինել։ Ներկայ տարեայ յունիս ամսու 13-ին, գիւղին մօտիկ յարձակուելով Փաթաօի վրայ, կըսպաննէ ու ինքը փախստական կը դառնայ։

Խորորոցի աշիրէթը անմիջապէս նոյն երեկոյեան կը յարձակի Ուրանց գիւղի վրայ կոտորածի սպառնալիքով... Կը կարծէր, թէ պիտի հանդիպի 1896-ի ստուկներուն. սակայն խրոխտ ընդդիմութեան մը զարնուելով, յետ կը նահանջի։ Յաջորդ օր ցորեկ դարձեալ յարձակում, աւելի մեծ ուժով և դարձեալ ընդդիմութիւն մինչև կէսօր. այդ ատեն գաւառ գտնուող զօրքը, թուով 100, հոն կը հասնի։ Քիւրդերը աւելի քաջալերուած, յարձակման մէջ աւելի յանդուգն կը լինին, վստահ՝ որ զօրքը իրենց պիտի խնայէ։ Կռիւը կը տևէ երկու օր. կըսպաննուին հոչակաւոր Ծերունի աւազակ Մահմեդ ու իր որդին Իպրահիմ, որ եկած էին կռիւը ղեկավարելու։

Այս պարագային ուրանցիք վհատելով զօրքերու թոյլ ընդդիմութենէն՝ դաշտի գիւղացիներէն օգնութիւն կը խնդրեն։ Գիւղացիք անմիջապէս խումբ մը զինելով, օր ցորեկով օգնութեան կը փութան, յայտնելով այդ բանը նաև Ուրանց գտնուող Հարիւրապետին։ Խումբը Ճանապարհին կը հանդիպի քրդերու կողմէն կազմակերպուած նոր յարձակման մը Կութ գիւղին վրայ։ Եւ անմիջապէս գիւղը մտնելով, կը տեսնէ, որ յարձակում գործողներէն երկու խորորոցի քիւրդեր կ'ապաստանին հոն գտնուող քիւրդի մը տունը։ Կրակ կուտան այդ ապաստարանը. սակայն գիշեր շուտ վրայ հասնելով քիւրդերն կարողացան մթութենէն օգտուիլ ու գաղտնի պատը ծակելով դուրս փախչիլ։ Սարսափահար քիւրդերը նոյն գիշեր Ուրանց պաշարող իրենց ցեղակիցներուն կը պատմեն Ֆէդայի խմբի արշաւը Ուրանցի վրայ և քիւրդերի փախուստը։ Պաշարողները կը թողնեն իսկոյն և կը հեռանան։ Այս բոլոր խնդիրներու մէջ կառավարութիւնը ոչ մի քիւրդ պատասխանատուութեան չի կանչեր, չնայած որ Փաթաօի սպանման առթիւ քրդեր յարձակելով Խուսս գիւղացի Գրիգորի վրայ զայն չարաչար կըսպաննեն։ Նոյնիսկ ասոր սպանողները ազատ կը թողու հետապնդումէ, ընդհակառակը կը ձերբակալէ 4 խեղճ կուութեցի հայեր իբրև տուն հրդեհողները. կը հետապնդէ Կարճկանի մէջ առևտրական գործերով զբաղող Յովսէփ Կալչակեան, իբրև գործին կազմակերպիչը։

—

Յուլիսի սկիզբներին, Հայոց-Զորի պլթենց գիւղացի Տիգրան Ճանապարհի վրայ յարձակուելով 1896-ին իր քահանայ հօր սպանիչ և ադկէ զատ բազմաթիւ հայեր խողխողող Միլլք գիւղացի Հսէնին վրայ կըսպաննէ զայն ու վրայէն վերցնելով տաս կրակոցն ու կառավարութեան տուած մարտին հրացանը, լեռ կը բարձրանայ՝ բազմաթիւ հայերու և քիւրդերու ներկայութեան...

***

Կարճկանցի Մուսա պէկի չարագործութիւնների մասին շատ անգամ գրուած լինելով թերթերու մէջ, աւելորդ կը համարիմ ընդարձակօրէն խօսել անոր պարբերական ոճիրներուն վրայ։ Միայն կարևոր կը սեպեմ գլխաւոր քանի մը տեղեկութիւններով ծանօթացնել ընթերցողին այդ համբաւաւոր ոճրագործին հետ, որը միևնոյն ժամանակ կառավարութեան աչքին լոյսն էր, իբրև իթթիհատական շէֆ մը։

1896-ին իր հայասպան վոհմակին ընկերացած է մարդու արիւն խմելու վարժ շուները, որոնցով իր գազանային ծարաւը յագեցնելու համար շատ տեղ հայեր այդ շուներով խեղդել կուտար։

1908-ին, երբ կառավարութիւնը Կարճկանի մէջ ձեռնարկեց զէնքեր հաւաքելու, սա գործին գլուխ անցնելով՝ նախ սպառնալիքի տակ հաւաքեց յանցաւոր ճանչցուող և աչքի զարնուող հայերէն մօտաւորապէս 500 լիրա, ապա նոյն այդ մարդկաց անասելի չարչարանքներու ենթարկել տալով ձեռք բերեց գաւառ գտնուած բոլոր զէնքերը։

Սահմանադրութեան հռչակումէն զկնի, հայերը դարձեալ քրդական սարսափի և պէկական ազդեցութեան տակ պահելու համար՝ կազմակերպեց Մահմէդ աւազակի խումբը, ներքնապէս օժանդակեց և ուժեղացուց ու սկսաւ մասնակի սպանութիւններ գործել տալ։ Այնպէս որ ասոր թելադրութեամբ թալաններէն և մանր դէպքերէն զատ՝ միայն Կարճկանի ու Կարկառի մէջ 4 սահմանադրական տարիներուն սպաննուեցան 25 հայեր։

Ասով մէկտեղ նա կ'երևնար կառավարութեան աչքին

որպէս պիտանի ու կարևոր անձնաւորութիւն մը, որու խորհուրդներուն յաճախ կը դիմէին կուսակալներն ու գայմագամները։ Եւ նա իր ճարպիկ ու դաւադրական բնաւորութեամբ բոլոր պաշտօնեաներուն կարող էր բաշել իր ետևէն ու քմահաճօրէն գործի դնել զանոնք, իր ծրագիրները իրականացնելու համար։

Վերջերս Վանի կուսակալ Թահսին պէկ այնքան ասպարէզ տուաւ այս խորամանկին, որ ալ անխնայ դարձաւ իր կեղեքումներու մէջ։ Գիւղերու տասանորդական տուրքը վաճառելու պաշտօն իրեն յանձնուած լինելով, 15 օրուան մէջ յաջողեցաւ կորզել հայ և քիւրդ գիւղացիներէ աւելի քան 500 լիրա։ Աշխատաւոր քիւրդ և հայ հասարակութիւնը նկատելով, որ այս շահատակութեան աղբիւրն ու պաշտպանը ինքը կառավարութիւնն է, հարկադրուած գլուխ կը ծռէր անոր ամենակարողութեան առաջ, ամեն օր կերթար համբուրելու պէկին քղանցքը միշտ իւղոտելով անոր պատառը։

Ու աֆուսիկ գեղեցիկ օր մը, օգոստոս 13-ին, կարճկանի կառավարական կեդրոնէն 1 ժամ հեռու, ճանապարհին վրայ 4 անծանօթներու կողմէ յարձակում կրելով, ձիէն գետին կը տապալուի ու գլխէն երկու հարուած ընդունելով կը սպաննուի։ Իսկ իրեն ընկերացող 12 խոլամները խոյս կուտան։ Հրացանը ձեռքէն առնելով լեռ կը բարձրանան, անմիջապէս կը պաշարուին հոն պատրաստ, կառավարութեան կեդրոն գանուող զօրքերու կողմէն. կը սկսուի սոսկալի կռիւ մը, ժամը 3-էն մինչև 12-ը։ Կռիւի ընթացքին կը սպաննուի 1 ժանդարմ և ծանրապէս կը վիրաւորուի ուրիշ մը. իսկ հայերէն ոչ մէկը կը վնասուի։

Նոյն կուռող խումբը կասկածելով, որ հետևեալ օր քրդական խուժան պիտի կազմուի և պիտի յարձակումներ լինին հայ գիւղերու վրայ, Գոմսայ լեռ կը պահուըտին։ Հետևեալ օր, Գաւաշէն հասնող նոր բանակ մը Գաւառ կը հասնի և միանալով հոն գտնուող զօրքերուն, առաջին առթիւ կը պաշարեն այդ լեռը։ Անմիջապէս կը պայթի ուժեղ կռիւ մը, որ կը տևէ 5 ժամ։ Մինչ այդ՝ կռուող խմբակի փամփուշտները կը վերջանան, ուստի կը պատրաստուին փախչելու։ Կիջնան լեռան ստորոտ գրտնուած Գոմս գիւղը, երբ բնակչութիւնը սարսափահար կը փախչէր դէպի գիմացի Եղեգիս հայաբնակ գիւղը. տեղւոյն դիրքը կռուի բոլորովին անպատշաստ լինելով՝ խմբակն էլ կանցնի Եղեգիս և անկէ ալ Օշվանց գիւղի լեռը՝ նոր ռազմամթերք ձեռք բերելով։ Կառավարութեան զինուորական բանակը մինչ այդ Բիթլիսէն հասած զօրքերով աւելի սաւարացած կը հասնի այդ լեռը ժամը 7-ին և կը սկսէ դարձեալ կռիւը։ Զօրքերու տեղացուցած գնդակներու տարափին տակ խմբակը արիաբար դիմադրեց մինչև 11½-ը, երբ վերջին փամփուշտներ սպառելով, գիրքեր թողնելով, կիջնան Օշվանց գիւղը։ Զօրքը կը խուժէ գիւղին վրայ և կը պատրաստուի սուր-նահար անել խմբակը, բայց վերջինս տասնհարեւան ատրճանակներով յետ կը մղէ զօրքը և մթութենէն օգտուելով կանցնի դարձեալ Եղեգիս գիւղ ու անկէ ալ առանց ընկեր մը վտանգելու գիւղերուն մէջ կը հեռանայ Գաւառէն ու կ'անհետանայ...

Կառավարութիւնը, սարսափահար այս երկու օրուան դիմադրութենէն, կը կարծէ, որ հայկական ապստամբութիւն է սկսեր. անմիջապէս ամբողջ Վանի, Բիթլիսի և Սղերդի բանակները շարժման մէջ կը դնէ, երրորդ օր արդէն կարճկան կը լեցուի անհամար հետևակ և ձիաւոր զօրքերով և գնդացիրներով, որոնք սակայն ոչ մի կուռողի չհանդիպելով, քանի մը օր խեղճ գիւղացիութեան վրայ բեռ լինելէ յետոյ, կը հեռանան։

Այս առթիւ կառավարութիւնը իր ադանդական սովորութեան համաձայն, զայրոյթի բաժակը կը պարպէ անմեղ գիւղացիութեան վրայ։ Ամենուրեք ծեծ՝ հայհոյանք, ձերբակալութիւն։ Մինչև այժմ դեռ ձեռք չի քաշած այս ուղղութենէն։ Քանտարկուած են 30 անմեղ գիւղացիներ և տակաւին կը հետապնդուին տասնեակներ ևս։

***

Այս տարուան հայերու այս վրէժխնդրական գործունէութեան մէջ Շատախն էլ ունեցաւ իր բաժինը։ Լսած էք թերևս Մոլլա Իսրաֆիլ անուն քիւրդը, որ վերջերս սպաննեց սատկենցի Մկրտիչ անուն հայը և որ տեղի կառավարական կեանքի մէջ որոշ դեր կը խաղար։ Այս չարագործը գիշերով իր անկողնոյ մէջ բռնուելով քանի մը անծանօթներու կողմէ, իր կնոջ գրկին մէջ գնդակահար եղաւ։ Նոյն վիճակին արժանացաւ նաև քիւրդ Սէլիմ, որ 1908-ին Դիարբեքիրի գիւղի եօթ հայեր սպանող աւազակներու պարագլուխներէն էր։

Այս տարի կառավարութիւն տեսնելով այս նոր ծայր տուող գործունէութիւնը, ստիպուած է տակաւին կուլ տալ, բաւականանալով միմիայն անմեղ հայեր ձերբակալելով. իսկ խստութիւններու մէջ ծայրայեղութիւններու տակաւին չէ դիմած, կասկածելով որ ադով գործը աւելի լայն ծաւալ կը ստանայ, ինչ որ թերևս անպատեհ է իր ներկայ քաղաքականութեան։ Իսկ քիւրդ աւազակ տարրը սարսափի ենթակայ մնաց։

ԳԵՂՋՈՒԿ

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԵՐԿՐԷՆ

Կարին, 10 յունուարի

Մինչ մէկ կողմէ յառաջ կը տարուի հայկական գաւառներու բարեկարգման խնդիրը, միւս կողմէն՝ տարօրինակ ժտայնութեամբ մը, թիւրք կառավարութիւնը իր

պաշտօնեութեամբ կը շարունակէ հալածանքները հայերու հանդէպ։

Վերջին ամիսներու մէջ դէպքերը կ'ընթանան այնպիսի գահավիժող արագութեամբ, որ դժուար է զանոնք դասաւորել ժամանակագրօրէն. եթէ համառօտ, սեղմ կերպով պատկերացնենք զանոնք, կըստանանք հետեւեալ ահաւոր պատկերը։

1. Խուզարկութիւններ, ձերբակալութիւններ, ծեծ։

2. Դրաքննութեան վերահաստատման նշաններ։

3. Զինւորագրութեան օրէնք, պարլամենտի ընտրութիւններու շուրջ վէճ ու աղմուկ։

4. Սարսափի և ջարդի յաւերժական մղձաւանջ։

Փակենք կարգով։

Մարդս կապշի ուղղակի տեսնելով այն խելացնոր վազքը, որով կառավարութիւն, մոռցած իր կրիտիկ վիճակը, կը ձգտի խեղդել, արգիլել այն ամենը, որ կը բղխի հայութենէն և կամ կը ծառայէ անոր շահերուն։

Ասկէ երկու ամիս առաջ, Պուլանրգի մէջ բռնուեցան քանի մը զէնքեր, մատնութեան մը հետեւանքով, որու հեղինակները արդէն իսկ ծանօթ են։

Այդ մատնութիւնն ու անոր յաջորդող ձերբակալութիւնը եկան ամբողջապէս պարզելու այն հիւանդոտ տրամադրութիւնը, որ կառավարութիւնը կը սնուցանէր Դաշնակցութեան հանդէպ։ Ամեն ճիգ թափեցաւ ըսել տալու, որ զէնքերը կը պատկանին Դաշնակցութեան։

Մատնութիւնը թէև կատարուած էր ճարպիկ ձեւով մը, բայց կառավարութեան բռնած դիրքը եկաւ ցոյց տալու, որ մատնիչներէն մէկը եղած է եօնճալեցի Դասուեան „Բրսօն"—որ յայտնի է նաև „Բճո" անունով։ Այս մասին մեր կասկածը զօրացաւ այն ժամանակ, երբ տեսանք, որ այդ խնդրի առթիւ „Բճոն" ալ կանչուեր է վկայութեան... Բացի այդ, միևնոյն անձնաւորութիւնը ստորագրած էր նաև այն հեռագիրը, որ ուղղուած էր կուսակալութեան և որու մէջ ամբողջ յանցանք կը ծանրացուէր դրսէն եկող հայերու վրայ... Ինքնին հասկնալի է թէ, „դրսէն եկող հայ" ըսելով ինչ ըսել կուզուի։ Այս մատնութեան հետեւանքով բանտարկուեցան քանի մը անմեղներ ալ—օրինակ. Սահակ վարդապետը և մէկ երկու երիտասարդներ, որոնցմէ մէկը մեռաւ բանտի կապանքներու տակ, թողլով այրի մը և քանի մը անոր որբեր։

Վերջերս Նարմանի մէջ բանտարկուեցաւ նաև տեղւոյն հայերէն մին, որ իբր դատարանի անկաշառ և արդարասէր անդամ սիրուած էր նոյնիսկ իսլամներէն։

Ունձքի մէջ (Կարին), գողութեան մը առթիւ, հարիւրապետ Նիւսրէթ պէյ 40 փայտի հարուածներով գանակոծել տուաւ հայ մը, հակառակ այն որոշ փնտռտին, որ գողութիւնը մեացած էր անյայտ։ Եւ այս բարբարոս օրէնքը՝ ամեն տեղ։

Օրէնքով արգելուած է զէնք կրելը։ Ճա՛տ բարի։ Բայց այդ օրէնքը կը գործադրուի միմիայն հայերու համար. Թիւրքերը ափ-աշարակայ զինուած՝ կը պատին ամեն տեղ. ոչ մի դիտողութիւն, բայց հայերու „պրաֆիկ" ատրճանակները կը գրաւուին։

Կառավարութիւնը 4 աչքով կը հետեւի հայերու ամեն մի քայլափոխին, բայց աչք կը գոցէ քրդերու զինման։ Անցեալ օր Զիֆթլիկի մէջ (Կարին) թիւրքերու կողմէն սահնակ մը լեցուն զէնք կը տարուի օրը ցերեկով։ Հայերը առաջնորդարանի միջոցով կը յաջողին բռնել տալ այդ զէնքերը, որոնք ապահովաբար պիտի դառնային իրենց դէմ։ Սակայն սարսափն ու շարդը միշտ կան ու կան։

Ցաւառ զրոյցներ սկսեր են պտտիլ, թէ „թիւրքերը ցոյցեր պիտի կազմակերպեն „քօնթրօլի" դէմ։ Անցեալ օր բազմաթիւ հայեր գոցեցին խանութները, որովհետև պարզ թիւրիմացութիւն մը կար մէջտեղ — թիւրքերը պիտի հաւաքուէին փաշին քէօշկ ըսուած տեղը և պիտի յարձակէին հայերու վրայ, բարեբախտաբար լուրը հիմնովին սխալ էր և հիմնուած „ասէկոսէներու" վրայ։

Բախտի տարօրինակ մէկ հեգնութեամբ, ներկայ բարեկարգումներու օրերուն, վրայ կը հասնի այն լուրը, թէ Աւետիք Ահարոնեանի „Ազատութեան ճանապարհին" անուն գիրքը արգելուած է, թէ արգելուած են նաև բազմաթիւ հայրենասիրական գրուածքներ.—եթէ իսկապէս որդեգրուին այս մէջտեղ նետուած արգելքները, այն ժամանակ մեզ համար պարզ կը լինի, որ հին վարչութիւնը կը վերահաստատուի և ցէնզօրը կը սկսի երևան գալ։

Կառավարութիւնը իր նոր հրատարակած զինւորական օրէնքով — որով քրիստոնեաները կը մնան ազատ կամ զինւոր երթալու և կամ տուրք վճարելու, կը խոխտէ հաւասարութեան սկզբունքը։ Մէկ կողմէն կը ջնջէ ամենաէականը, միւս կողմէն կը խոստանայ բարեկարգումներ մտցնել լոկ խօսքով... Ու այս բոլորը այն ժամանակ կ'ըսենք, երբ թիւրք կառավարութիւնը անսովոր toupel-ով մը, իր կաշիէն դուրս կ'ելնէ հաւատացնելու համար թէ, „առանց Եւրոպայի միջամտութեան ալ ինքը կրնար երկիրը բարեկարգել"։

Կան այնպիսի պարագաներ, որոնց մասին ինչքան ալ ուզենք սառնարիւն լինել, անկարող ենք...

Մեզ համար շատ պարզ է այն, թէ կառավարութիւնը կը խաբէ, թէ նոյնիսկ խոստման ժամանակ արդէն կը դրժէ իր խոստումը։ Պարզ է, այո՛ և սակայն կառավարութիւնը կուզէ իր անխելք խելքով խաբել, և „ի վերայ այսր ամենայնի" կը պահանջէ, որ հայ ժողովուրդը զինաթափ լինի։ Զինաթա՛փ... ո՛չ, այս անգամ ո՛չ. ամեն բան՝ բայց ոչ զինաթափութիւն... Մենք այլ ևս „ոչխարի հօտ" չենք։

Ժողովուրդ մը, որ տեսած է տանջանքի ու ջարդի օրեր, ժողովուրդ մը, որ կը տեսնէ տակաւին սպանութիւն, թալան, որ իր սեփական կաշիի վրայ կըզգայ

կառավարական ճնշումն ու անարդար վերաբերմունքը,— այդ ժողովուրդը չի կարող և պետք չէ, որ անտարբեր մնայ, նա պետք է դիմէ իր ինքնապաշտպանութեան, որ վեր է ամեն սրբութենէ...

Ա. ՋՆԴԻ

ՋԱՒԱՐԵԱՆ

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ „ՁԵՌՔԸ“ ՈՒ ՍԻՄԷՕՆԻ “ԱՊՐԴՔԸ“

(ԴԱՐՎԻՇԻ «ՔԷՇԿԻԻԻՑ»)

Խանասորի արշաւանքից անմիջապէս յետոյ էր, խոյ, Սալմաստ սաստիկ հալածանք սկսեց պարսիկ կառավարութիւնը հայ յեղափոխականների դէմ. ընկերներից 20 հոգի ձերբակալեց, միւսները, բոլորը ծլկել, հեռացել էին. մնացել էինք որոշ նպատակով ես և բժիշկը—փորը։

Հետապնդումի կծիկը մեզ էլ հասաւ, մենք էլ ստիպուած՝ անհետ աչքանք։ Իմ դրութիւնը ողբալի էր. հիւանդ՝ բոլորովին ուժասպառ...

Անցանք Ղարադաղով, Ղարաբաղով, ընկերս—բժիշկը մնաց իր հայրենիքում, ես եկայ Արևելեան Բիւրօին ներկայացայ՝ թէ Սալմասի ապագայ գործունէութեան մասին հրահանգ ստանալու և թէ իմ բայքայուած ֆիզիկականը կաղդուրելու։

Թիֆլիսի „Կուկիա“ թաղի տներից մէկում Բիւրօի ժողովն է։ Ներկայ են՝ մեր երկու սիրեցեալ ուսուցիչները՝ Քրիստափոր և Սիմէօն և մի ուսուցիչ (Ն. Ա.) Գէորգեան ՀԵՄարանի։ Ըստ երևոյթին արշաւանքը լաւ էր ազդեցել, ոնո էլ ժպտերես էին, նամանաւանդ Քրիստափորը իր գոհաբանական „օկօ, զա օկօ“ ապուած յօդուածից յետոյ (տեղական ռուս „Նովոէ Օբոզրէնիի“ թերթի մէջ)։

Արշաւանքի մասին հարց ու փորձ չ՝եղաւ, երևի ինձնից առաջ մանրամասնօրէն տեղեկացուած էին։ Սիմէօնը միայն իրար ետևից ինձ մի քանի հարցեր տուեց. „Արշաւանքից բերած աւարի ձիերը ի՞նչ արիք, դու ինչո՞ւ եկար, չէ՞ որ Դերոյեանը Վանից զէնք է ուզում, ո՞վ պիտի զէնք բաց թողնի“։ Մի քիչ սրտնեղած պատասխանեցի, որ աւարի ձիերը բերողներն էլ հեծան գնացին, իսկ ես նախ որ անկարող էի մնալ, երկրորդ, կարևոր էր գիտնալ Բիւրօի հրահանգները։ Առողջութեանս մասին ալլ ևս ոչ մի խօսք. զգացի, որ „քարը ինձ նետուեց“... (Իբրև մասնագէտ՝ ես պարտաւոր էի մնալու). իսկոյն աւելացրի, որ վաղը և եթ մեկնելու եմ Սալմաստ։ Իմ խնդիրը գոցուեց. հերթական հարցն էր՝ մի քանի նահատակ ու վտանգուած ընկերների ծնողները դրամական նպաստ էին խնդրում կազմակերպութիւնից։ Կար նաև Բանկ-Օտտոմանի ընկերներից մէկին օգնելու խնդիրը։ Նրան մի օր առաջ տեսել էի եկել էր Եգիպտոսից Օդեսսա, Օդեսսայից ճամբել էին Գանձակ հանգուցեալ Բագարատ վ. Թաւաքեալեանի հասցէով, իսկ վերջինս էլ ուղղել էր Բիւրօին։ Կարծես տակաւին աչքիս առջև կանգնած լինի նա՝ թուխ դէմքով, ճաղատ գլխով, բարձրահասակ, տարիքը մօտ 28-30, Բանկի ռուժքերի կնիքը վրան։ Աջ թևը չէր աշխատում, ջնասւել էր ռուժքից։ Կուսակցութեան սնդուկի վիճակին էլ տեղեակ էի, եղած չեղածը ծախսել էր Արշաւանքի վրայ ու դեռ մի քանի հազար ռուբլի էլ պարտք էր թողել։

Օգնութեան, նպաստի խնդիրը դրուած էր. վիճաբանութիւնը գնալով ընկերների մէջ տաքացաւ. Սիմէօնը կտրուկ մերժեց, գրեթէ բղաւելով. „ո՛չ, չպէտք է տանք, չպէտք է վարժեցնենք, նրանք իրենց պարտքն են կատարել, յեղափոխութիւնը դրամով չէ“ ասելով։ Ընկերները նոյնպէս կողմնակից էին։ Լուռ էր Քրիստափորը. տեսնում էի՝ սկսում է այլայլել, տեղից վեր թռաւ գունատուած, շրթունքները կրծոտելով.

„Լա՜ւ, Սիմէօն, միւսներին չէք տալիս, իսկ սրան ի՞նչ կասէք“, ցոյց տալով իր աջ թևը (ակնարկը հասկացան, որ Բանկի հերոսի մասին է)։

Սիմէօնը նորից—„այո՛, և նրան էլ չենք տալ“...

Քրիստափորը, վիրաւոր առիւծի կատաղութեամբ, կարճ ոտքի պիպէրի վրայ կանգնած, ձախ ձեռքով աջ թևը բռնած ու անդադար թափահարելով գոռում էր. „Ի՞նչպէս կը մերժէք, իր ձեռքն է բերել, իր ձի՜ռքը“... Ու այլ ևս չկարողանալով իրեն զսպել, թողեց ժողովը ու քովի սենեակը հեռացաւ ծայրայեղ յուզման մէջ։

Ժողովը, ի՜նչ խօսք, փակուած էր. բոլորս կարծես կիսախռով ցրուեցինք։ Հետևեալ օրը Քրիստափորը տուեց ինձ 50 ռուբլի ու մի տաք, շատ տաք համբոյր, ասելով—„աւելի դրամ չունինք, գնա՛, գործդ տես, նորից կը հասցնենք“։

Բանկ-Օտտոմանից „ձեռք բերող“ հերոսին չ՝իմացայ բան տուին թէ ո՛չ. ես մեկնեցի անմիջապէս, մոռանալով՝ թէ տկարութիւնս և թէ ամբողջ էութիւնս։

Քրիստափորին այլ ևս չտեսայ։

Իսկ Սիմէօնը, պարտքի մարդը, դրանից յետոյ տասնամեակ տարի, մինչև 1908-ի աշունը, կանգնած էր մեր գլխին, պահապան հրեշտակի պէս։

Հիւսիսի հողմերը մեզ շատերիս հեռացրին հայրենիքից և սար ու ձոր նետեցին։ Սակայն մեր պաշտած, մեր երազած նուիրական վայրերի մէջ էինք։

Այդ դաժան իրականութեան մէջ ապրում էինք գալոց ազատութեան յոյսերով և մխիթարւում ու քաջալերւում էինք մեր մեծ ընկերների կեանքով ու գործերով։

Ահա նրանցից մէկն էլ ընկաւ—մէկը ամենամեծերից ամենասիրելիներից։

Ա՜հ, ես կարօտ մնացի նրա տաք համբոյրներին, այստեղ, հեռո՛ւ, սէգ Սիփանի ստորոտներում։

ԴԱՐՎԻՇ

ԴՐԻԱԳՆԵՐ ԶԱՒԱՐԵԱՆԻ ԿԵԱՆՔԷՆ

—

Քաղցը ու միանգամայն տառապալից յուշեր կը կապեն զինքը երկրին։ Սասունն՝ իր կարօտը, Մուշ՝ իր պայքարը տեսած է։

Ամեն ժայռէ քար մը, ամեն գիրեզմանէ կտոր մը առած էր։

Քարեր՝ վկայ հայ գիւղացնամարտին ու բեկորներ—յիշատակները մեր թանկագին մեռելներու։

Հրայրն ու Վահան, Զաւուշն ու Սերոբ կ'ապրին անոր հետ այդ նշխարներով, ու լուռ, մխացող կրակ մը, գաղտնի ու ջերմին արցունք մը՝ գիշերային հեծկլտացող պահերուն, Սիմօնի ընկերներն էին։ Ու զանոնք սեղմած իր կրծքին, նիւրական աւանդի մը պէս, որ վեր է ամեն սրբութենէ, միշտ կը թափառէր նա լեռնէ լեռ, դարէ դար։ Քանի՜ անգամ Դերվիշը անցած էր այնտեղերէն կարօտի քաղցը սրտին, ու քանի անգամ մանկիկի մը պէս լացած։

* * *

— „Եղբայր, տարօրինակ մարդիկ են ասոնք, կ'ըսէր մեր պօլսեցի ընկերներէն մէկը, ո՛չ կուտեն, ոչ կը հագուին. մինչև որ մէկին կամ միւսին օձիք մը դնել կուտանք, հոգինիս դուրս կուգայ“։

Խե՜ղճ պօլսեցիներ, գիւրի՞ն էր երևակայել մեծ մարդ՝ առանց շիք զգեստներու...

— „Սիմօնը, կ'ըսէր Ռոստոմ, շատ կը սիրէր կիտրոն. բայց նա մէկ կիտրոնը կը գործածէր մէկ ամիս. խնայուած դրամը նա կուտար ամենքին—ով չունէր։ Իր ուսանողութեան ամբողջ շրջանին, սաացած ամսականներու 1/4-ը միայն կը գործածէր։ Խնայած դրամը կուտար աղքատ ուսանողներուն։ Ցաւախ է պատահեր որ նա պարտքով դրամ է վերցուցեր, ուրիշին օգնելու համար։

„Սիմօնի հանգստութեան մասին միշտ ալ խօսուած է, բայց միշտ ալ մերժուած է իր կողմէն“։

Ո՞ւրկէ ժառանգած էր այս գերազանց, այս անհաւասարի առաքինութիւնները։

Խե՜ղճ հայութիւն... Դարեր շարունակ կը ճգնիս, գարեր երկունքի ցաւը կը քաշես Սիմօններ տալու համար մեզ—ազգութիւններուն յիշեցնելու քու տոկուն, անվհատ գոյութիւնը—ու հազիւ կարճատև կեանք մը կը նորհես անոնց։

* * *

1911-ի օգոստոս ամսուն։

Կովկասահայ մտաւորականութեան ականաւոր ներկայացուցիչները մեզ հիւր էին եկեր։ Կայնոյ Ե. Միութիւնը ի պատիւ իր թանկագին հիւրերուն, սեղան մը սարքին Կարմիր վանքի մէջ։ Ա՜խ, ինչպիսի երգներ էինք հիւսեր անոնց համար։ Մենք սրտատրոփ կը սպասէինք կառքերուն։ Ցանկարծ տեղի ունեցաւ մի խելացնոր վազք Ամենքը փութացին դէպի եկեղեցիները—Ահարոնեան, Խաժակ, Իսահակեան։ Ոչ ժամանակ, ոչ ալ առիթ գտայ յառաջ անցնելու։ Ցուսահատ ետ դարձայ և տեսայ մարդ մը, որ կը քալէր միայնակ, առանց տեսնուելու մէկէն։

Նա ծածկած էր հին շլեափ մը, հագած կիսամաշ զգեստներ, մօրուքը փոշոտ էր, օձիքը մաշած ու կեղտոտ։ Կը քալէր անհոգ դերվիշի մը պէս։

— Կրնա՞նք ծանօթանալ, հարցուցի հետաքրքիր թոնով մը։

— Զաւարեան։

Մնացի ապշած։ Ուրեմն սա՞ էր այն մարդը, զոր տարիներ շարունակ տենչացեր էինք տեսնել։ Այս փոշոտ, այս դերվիշ մա՞րդը, որուն ոչ ոք կարևորութիւն տուաւ։ Դժուար էր հաշտեցնել այս զգեստները, այս անհոգութիւնը անուան մը հետ, որ հռչակած էր։

Լուռ ու նախատող խղճահարութիւն մը կը կըրծէր սիրտս։ Այսքան պարզութիւն, այսքան անձնուրացութիւն ո՞ւր տեսնուած էր։ Մենք ինչո՞ւ այդպէս չեղանք...

Սկսանք քալել։ Դիտեցի շուրջս. ոչ ոք մեզ կը խանգարէր ու թաքուն ուրախութիւն մը զգացի, երբ տեսայ, որ այդ բոպէին Սիմօնը մինակ ինձ կը պատկանէր, ի՞նչ լաւ էր, որ նա մինակ մնացեր էր։

Ի՜նչ հիանալի էր նա իր այդ տարազին մէջ. ի՜նչ մեծութիւն, ի՜նչ պատկառանք այս փոքրիկ, ջղային հասակին մէջ և մանաւանդ ո՞րքան տանջանք իր այրուած դէմքին վրայ։

Խօսեցաւ նա։ Հարցումներ ըրաւ իր սիրած գործի մասին։ Ոգևորութիւնը աւելցաւ ու քանի գնաց դէմքը աւելի ճառագայթեց։ Ամբոխը մեզ մոռցաւ ու մենք՝ ամբոխը։ Կը խօսէր մարգարէական շեշտով մը,—ջղուտ, նախատող սրտցաւութեամբ։ Իսկ ես մտիկ կ'ընէի գինովցած։

* * *

Սեղանի վրայ ալ մնաց մոռցուած։ Ամբոխը տարուած էր միւսներով։

Բաժակները իրար ետևէ պարպուեցան բոլորի կենաց։ Խօսեցան ամենքը դարդի ու զուլումի աշխարհէն, ցոյց տուին մոնկոլական տարրի և մանաւանդ մուսլիմաններու քանդող աւերող պատմական փաստերը։ Ոչ մի առա-

ջարկ Սիմոնին, ոչ մի գաւառթ անոր կենաց։ Նա կծկած էր անկիւն մը ու առանց ձայնի կուտէր։ Յանկարծ հնչեց իր ուժեղ ձայնը։

„Մենք, կ'ըսէր նա, սովրած ենք միշտ տեսնել կեանքի վատ կողմերը։ մեր խօսքերէն յուսահատութիւն ու լաց կը բուրէ։ Ազնիւ պայքարի ու գիտակցութեան մասին խօսող չկայ։ Սխալ է այն կարծիքը, թէ դեղին ցեղը անընդունակ է քաղաքակրթելու։ — Ա՛ս մի գիտական զրպարտութիւն է նեռաւած այդ ցեղի ճակատին. սխալ է և այն, որ իսլամիզմը միայն քանդեց. — վկայ են արաբները. անոնք էին որ, միջին դարուն, փրկեցին գիտութիւնը քրիստոնէական մոլեռանդութենէն, անոնցն է՝ „Ալ-Ճիմին“ ու „Ալ-ջեբրան“։ Պէտք չէ շփոթել նաև տաճիկ ժողովուրդը տաճիկ կառավարութեան հետ. ես իմ ճամբորդութեանս միջոցին հանդիպեր եմ այնպիսի թիւրք և արաբ ցեղերու, որոնք իրենց մաքրութեամբ ու ազնուութեամբ կրնան մրցիլ ձեր փառաբանած ազգերու հետ։ Մենք չգանգատուինք տաճիկ ժողովրդէն և ոչ ալ լանք. մենք կուտենք այն փտած մեխանիզմին դէմ, որ կը կոչուի Օտտոմանեան պետութիւն իր սողուն պաշտօնէութեամբ։ Պայքարենք և հասկցնենք իսլամ ժողովրդին այն անդուլ, որոնող աշխատանքը, որով հրաշքներ կը գործեն ուրիշներ և որ հալածուած է մեր երկրէն։

„Այստեղ, Յաճկաստանում, չկան եւրոպական քայքայիչ կարգերը — կապիտալ, հողային մոնոպոլիա։ Այստեղ դեռ գոյութիւն ունին հին նախնական բարի կարգերը, որոնք կրնան խախտուիլ։ Աշխատենք պահպանել և թիւրքիան մի դրախտ կը դառնայ“։

Իսկապէս։ Յաճկաստանի կեանքը ուսումնասիրող այդ գիտնական մարդը մեզ թուերով ապացուցեց, որ այս երկրի վերածնութիւնը կարող էր անսահման բարիքներ տալ իր հպատակ բոլոր ազգութիւններուն։

Նա ոչ միայն կը ճանչնար այս երկրի բացասական կողմերը, այլ և կարողացեր էր ճշգրտօրէն ուսումնասիրել անոր դրական երևոյթները։

Գալով իսլամ ժողովրդի մաքրութեան, — նա այդ գիտէր փորձով։ Իրաւամբ նկատած էր, որ թիւրդ հասարակ ժողովուրդը նոյնքան ազնիւ և շինարար էր, որքան հայը։ Ուշ եղած ժամանակ, նա մտաւ քիւրդ բայիայի ներքին, ցաւոտ կեանքի պայմաններուն մէջ, ցոյց տուաւ շարաւոտ վէրքերը, արծարծեց անոր մէջ մինչև այն ժամանակ մխացող լուռ կրակը ու յաջողեցաւ միացնել հայ-քրդական աշխատող զանգուածները, պատրաստել տալ այն հսկայ հանրագրութիւնը — 4000 ստորագրութեամբ — որուն երևան գալը մի խոշոր փաստ է ի նպաստ հայ-քրդական միութեանն։

Այդպէս էր Զաւարեան։ Նա կը պայքարէր այն ժամանակ, երբ ամենքը կուլային. կը յուսադրէր ու կ'աշխատէր մշտավառ պահել այն հաւատքի կրակը, զոր մարելու մօտ կը կարծէին ուրիշները։ Այս խօսքերը կ'ըլլային այն ժամանակ, երբ 4-րդ զօրաբանակի միջոցը նազիմ փաշա կը հալածէր հայ մաւորականութիւնը Յարօնի մէջ ու բուռն նախատինքներ կը տեղացնէր հայ ցեղի վրայ։

* * *

Անկէ յետոյ մէկ անգամ միայն առիթ ունեցայ տեսնելու զինքը։ Դաշնակցութեան 7-րդ Ընդհ. Ժողովին առիթով, անգամ մըն ալ այցելեց Կարին։ Այս անգամ նա աւելի մաշած ու ծիւրուած էր։ Երբէք հրապարակ չելաւ. ա՛լ չուզեց խօսել այն ժողովրդին, որ պատմական այս օրերուն, թողած ամեն մի հիմնական աշխատանք, „դիւանագիտութեամբ“ կը զբաղուէր։

Ընդհանրապէս նա զբաղուեցաւ տնտեսական տեղեկութիւններ ու թուեր հաւաքելով։ Իր հայեացքներու գլխաւոր դրանցքներէն մէկը հայ Ժողովրդի տնտեսական դրութիւնն էր։ Զինքը կը շահագրգռէին աւելի շատ հարուստ գիւղերը, քան մանակի բռնութիւնները. „տնտեսապէս յառաջ գնացող հայը կրնայ ամեն բան ընել“... „Ցուցէք մեզ թուեր, տնտեսական թուեր — հողի, անասունի քանակի տեսակէտէն, յարաբերելով հայի թիւրքի ունեցածները — և դուք աւելի մեծ ծառայութիւն մը կը մատուցանէք այս ժողովրդին, քան ձեր լացերով ու վայնասուններով“։

Վերջերս նա առանձին ընդարձակ հարցարանով մը դիմած էր ամեն տեղ սպանելու համար նիւթեր՝ հոյակապ աշխատութեան մը համար, որ կրնար նորմէջ մը բանալ մեր չոր ու ցամաք կեանքի մէջ և որ դժբախտաբար մնաց կիսատ։

Բացի այդ աշխատութենէն, նա պիտի կարողանար այնքա՛ն առատ նիւթ մատակարարել Դաշնակցութեան պատմութեան համար։

* *

Դժուար է պատկերացնել — թէկո՛ զ մանակի յիշողութիւններով — անոր կեանքի ոգէ գիծը։ Յարօրինակ պատմութիւն մըն է այդ կեանքը, նման հայի պատմութեան — ամբողջ պայքար, տոկունութիւն, մարտիրոսութիւն։ Երբ աչքի առջև կը բերեմ իր դերվիշի էարքաշ կեանքը, իր ազնիւ, ասուածային սիրտը, երբ կը վերյուշեմ այս մէկ երկու գծերը, կը զգամ այն ահագին աղէտը, զոր հայը ունեցաւ յանձին Սիմոնի կորստեան։

Ա. ՋՆԴԻ

Կարին

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

ՎԱՐԴԵՆԻՍՑԻ ՆԱՏՕ

1888 թուականներին, երբ Մշոյ դաշտում սկսեցան Մուսա պէկի հալածանքները հայերի դէմ, վարդենիսցի Մարգար վարժապետը մի քանի գիտակից երիտասարդներ հաւաքած, կրսկսէ ինքնապաշտպանութիւն ժղել։ Այդ քաջերու առաջին շարքին կանգնած էր Նատօն, որ այն ժամանակ ընդամենը 17 տարեկան էր։ 2—3 տարի հին ձեւի հրացաններով կը պաշտպանեն գիւղը։ 90—91 թուականներին, երբ Մուսա պէկի դրդումով մուշաղչէնցի Կրէի հարսը կուզէին փախցնել պէկի ծառաները, Նատօն միացած իր ընկերների հետ, դուրս են գալիս նրանց դէմ, ազատում են հարսը, սպաննելով մի քանի քիւրդ։ Հայերէն կը զոհւի քաջարի Կրգեն ու կը վիրաւորւի Խաչան։

Այնուհետև սկսեց հայահալած քաղաքականութիւնը, ձերբակալեցին 32 վարդենիսցի հայեր։ Նատօն տեսնելով, որ իրեն էլ վտանգ կըսպառնայ, թողեց իր չափահասի հրացանը և իր սիրած վայրը, անցաւ 92 թուականին Ռուսաստան։ Այստեղէն զէնքեր առաւ ու վերադարձաւ իր ծննդավայր Վարդենիս, երբ արդէն Մարգար վարժապետը կախուած էր Քաղէշի մէջ։

Զէնքերը կը թողու ու նորէն կը վերադառնայ Ռուսաստան, Եալթա։

Ես ծանօթացայ նրա հետ Եալթայում 93 թուականին, առոյգ ու աշխոյժ երիտասարդ մ'էր։ Այն ատեն մտել էր արդէն դաշնակցական օժանդակիչ խմբերու մէջ։ Միաւժամանակ Եալթա մնալէն յետոյ կ'անցնի Սեվաստոպոլ։ Տարօնի հարազատ զաւակը յարմար առիթ կը փնտրէ մտնելու համար զուլումի երկիրը. ահա 95 թուականին Հրայրը հանդիպում է նրան Սեվաստոպոլում, ծանօթանում ենք։ Նատօն իր պատրաստակամութիւնը յայտնեց երկիր երթալու։ Անմիջապէս թողեց գործը և առաջի պատահած նաւը նստեցինք ու մեկնեցինք Պաթում։ Հազիւ մի քանի օր էր անցած, ահա Հրայրը 27 մշեցի երիտասարդներու հետ հասնում է Պաթում և անկից մեկնում է Ղարս։ Այս 27 քաջերի մէջն էր Առնիստցի Օհանը, Աղջանցի Նազարը, Արտէնը, Մանազկերտցի Մքաելը, Ուսաղցի Արտէնը, Խալխալաղցի Մուրատը, Բեցի Համբարձումն ու Պետրոսը, որոնց մասին առանձին առանձին պիտի գրեմ։ Այժմ Նատօյի մասին։

95-ին առաջին խումբն անցաւ Ղարսի գծով, Անդրանիկի, Աստուրի և Օհանի ղեկավարութեամբ։ Երկրորդ խումբը, 95 հոգուց բաղկացած, Հրայրի, Թաթուլի և Սերոբի առաջնորդութեամբ, որոնց մէջ էր Նատօն։

Երբ ջարդերն սկսեցան, Նատօն մի տասնեակ կռիւների գլուխ անցած, վարեց քանի մը հերոսական կռիւներ։ Մի օր նա իր խմբով Քէօբրիքէօյ է, միւս օր Քուդապազ... Այսօր բասենցին երախտագիտութեամբ կը յիշէ Նատօյի անունը և նրա քաջագործութիւնները։

Հրայրը այսպիսի մի դէպք կը պատմէր նրա արիութեան մասին. մի անգամ, երբ Գոմաձորից խմբով կ'երթայի Քէօբրիքէօյ, յանկարծ կամուրջի վրայ մթութեան մէջ նկատեցի մի քանի ստուերներ։ Երբ ասի „օլան քի՞մ սիս“—Նատօն իր առնական ձայնով պոռաց. „սի՛զ քիմ սիս թէսլիմ“ ու մի հրացան արձակեց... Մեր և նրա մէջ սկսեց կռիւ... Հազիւ անցաէ մի քանի վայրկեան երբ տեսայ արդէն Նատօն մեր դիրքի առաջն էր։ Երբ կուզեր հրացանի խողովակը իմ սրտին դնել, թիւրիմացութիւնը պարզուեց... Ընկերներս իրարու հետ գործ ունէինք։

Այդ սոսկալի օրերից յետոյ, անցաւ նորէն ռուսական Բասեն։ Մի քանի անգամ զէնք փոխադրեց։ 97-ին անցաւ Ռուսաստան։ 99-ին, երբ Խաստուրի խումբը կը կազմակերպուէր, Նատօն գալիս է Ղարս, երկիր անցնելու համար։ Սակայն դաւաճան ձեռքեր թունաւորեցին կտրիճին. մեռաւ իր սիրած վայրերէն հեռու, Շիրակի քիւրէկդէրէ գիւղում, 32 տարեկան հասակի մէջ։

ԱՌՆԻՍՏՑԻ ՕՀԱՆ

Մշոյ դաշտէն էր։ 95-ին, երբ Հրայր Ռումանիայէն կ'անցներ Պաթում իր 27 ընկերներով,—սրանց մէջ էր Օհանը։ Կեանքիս մէջ չեմ տեսած նրա պէս գեղեցիկ երիտասարդ։ Հազիւ կը լինէր 25 տարեկան. նրա թաւ բեխերը, յաղթանդամ, առիւծանման կերպարանքը կը հիացնէր, կ'ապշեցնէր նայողին։ Վայրենական բան մը կար մէջը, մաղտա, ահարկու։ Մի զարմանալի դէպք. մի օր Ղարսի մէջ, ընկերների հետ կ'երթայինք Ղարասու գետը լողանալու, հեռուէն տեսանք գետի մէջ մի տարօրինակ մարմին. ընկերներէն մէկը կ'ըսէր, թէ դա մարդ է, միւսը թէ գոմշի ձագ է... Երկուքը գրազ էկան. մօտեցանք... մեր Օհանն էր։

Հրայրի խմբին միացած, նա էլ անցաւ Բասեն։ Նա էլ եղաւ Բասենի կռիւներու մէջ Նատօյի հետ։ Կը կուէր քաջաբար, կատաղօրէն։ Որոշ ժամանակ նա էլ զբաղուեց զէնքի փոխադրութեամբ։ Ապա մասնակցեց Խէտրինի խմբին, տասնապետի պաշտօնով։ Խէտրինի կուռն Օհանը վիրաւորուեց և վիրաւոր ընկաւ թշնամու ձեռքը, իր հրացանը ջարդ ու փշուր անելէ յետոյ...

Քիւրդերը Օհանի գեղեցկութիւնը տեսնելով, կուզեն նրա վէրքերը բժշկել։ Այդ ժամանակ սեյտանցի մի քիւրդ շէյխի աղջիկ տեսնում է քաջին ու սիրահարում է նրա վրայ։ Առաջարկում է Օհանին կրօնափոխ լինել և առնել իրեն։ Օհանը մերժում է առաջարկը, որ ինք հայ ծնւած է և հայ պիտի մեռնի։ Քիւրդ աղջիկը ամեն ճիգ կը թափէ համոզելու, սակայն իզուր։ Աղջիկը իր սիրտը կը բանայ իր շէյխ հօրը։ Շէյխն ևս

կ'առաջարկէ Օհանին կրօնափոխ լինել ու ամուսնանալ։ Ի պատասխան Օհանը կը հայհոյէ ու կ'անարգէ շէյխին։ Այն ատեն վերջինը գազան կարծիքն կը հրամայէ տանջանքներով սպանել Օհանին։ Այդպէս ալ կը վերջանայ կարիճին կեանքը։

Օհանը ծնեալ է Մշոյ Առնիստ գիւղը։ 19 տարեկան հասակին գնացեալ է Պոլիս և մի քանի տարի մնալէ յետոյ, Գուժգափուի դէպքէն վերջ անցեալ է Ռումանիա, ուր և մտել է Հ. Յ. Դաշնակցութեան մէջ։ Սպանուել է 26 տարեկան հասակում։

ԱՂՋԱՆՅԻ ՆԱԶԱՐ

Նա եղաւ 95-ի մեծ արշաւախմբի առաջին զոհը Ալիճագրակ գիւղի մօտ, Բասենում։ Իրբ խումբը ռուսաց Բասենից անցնում է տաճկաց Բասեն, թիւրք սահմանապահ զինուորները նկատում են ֆէդայիներին և սկսում են կրակել։ առաջին գնդակից ընկնում է Նազարը, 23 տարեկան։

Փոքր հասակում եղել է Ռումանիա, ուր բռնուել, բանտարկուել էր և ապա բանդից փախել։ Մի անգամ տաճիկների հետ կռիւ է տեղի ունենում աշխատանքի ժամանակ. կրակոտ Նազարն էլ միացած իր հայրենակիցների հետ կռւում է տաճիկների դէմ։ Մալազկերտցի Մքայէլը սպանում է մի տաճիկ. դրա համար Նազարին էլ ձերբակալում են։ Սակայն բանդից խոյս է տալիս և գնում է Ղարս, ուր և միանում է Բասեն անցնող խմբին ու լինում է առաջին զոհը։

ԱՂՋԱՆՑԻ ԱՐՏԷՆ

Բարձրահասակ, յաղթանդամ երիտասարդ էր. նահատակուեց 28 տարեկան հասակում։ Մշոյ դաշտի Աղջան գիւղում է ծնել նա, բարեկեցիկ մարդու մը զաւակն է եղած։ Երկրի զուլումներն ու հալածանքը մղեցին նրան դէպի օտարութիւն—Ռումանիա։ Այնտեղ մտաւ „Դաշնակցութեան" շարքերը։ 95-ին Հրայրի հետ Ռումանիայէն անցաւ Ղարս և միացաւ նրա խմբին։ Նատօյի տասնեակի մէջ Բասենում մի շարք կռիւներ է մղում։ Ապա անցնում է ռուսաց Բասեն, ուր միաւորամանակ զբաղւում է ընկերների հետ զէնքի փոխադրութեամբ։ 1897-ին խմբի հետ անցնում է Նորէն սահմանը և կռւի մէջ նահատակւում։

ՊՈՒԼԱՆԸԳԻ ՇՐՋԱՆ

Պուլանըգի նահատակները...

Տարաբախտ գաւառի մը այնքան տարաբախտ զաւակները, որ մնացին անծանօթ, ինչպէս մնացած էր իրենց ծննդավայրը։

Անյայտ մեռելներ՝ միշտ մոռցուած, բայց որ անհուն յոյսերով, անսասան հաւատքով նետուեր են մարտի ու արհաւիրքի գիրկը, մոռնալով ծնողք, կին, զաւակ։

Լեզու չեն ունեցեր խօսելու, գրիչ չեն ունեցեր գրելու, մնացեր են լուռ ու մոռցուած—այդպէս են մեր գաւառի մեռելները։

Անոնք, բոլորն ալ գրեթէ, առանց բացառութեան փախեր են արհաւիրքէն ու սովէն, մահէն ու բանտէն։ Փախեր են, այո՛, բայց ընդգրկած լինելով արիւնի ճամբան, ինկեր են հայրենի հողէն դուրս. մէկը՝ Երևան, ուրիշ մը՝ Զանգեզուր, ուրիշներ՝ կէս ճանապարհին։

Սրտառուչ է այդ նահատակներու կեանքն ու մահը։ Եթէ շատերու մարտիրոսութիւնը եղած է գիտակցօրէն, ասոնց մահը եղած է մի սրբազան, անգիտակից պաշտամունքի արդիւնք, պաշտամունք՝ որ ծնած է վրէժի ու մոլեգնութեան մէջէն։ Ահա Յովհաննէսը... „Մեր Մանէն", որու վրայ չգուրգուրաց ոչ մի մայրական սիրտ, որ գուցէ չի ճանչցաւ իր հայրական օճախը։ Նա ի բնէ վախկոտ, խեղճ ու կրակ մի աշխատաւոր էր... Անցան տարիներ, նա անհետացաւ, ինչպէս պիտի անհետանար անտուն, անտէր որբ մը, միշտ զրկուած ու ենթարկուած չարքաշութեան։ Ու օր մը, կը տեսնենք զինքը „Նէմրութի հսկայ"ին հետ՝ կողք-կողքի Մուշեղի, Սիմօնի ու Կարապետի հետ։ Փապշէնի մեծ կռւին մէջ—կռիւ՝ որ տեղի ունեցաւ Յովակիմ Խաչմանուկեանի մատնութեան վրայ—ընկաւ արիւնշաղախ...

Մի վսեմ, սրտակեղիք բան կայ այս անլեզու, խեղճ հերոսներու մահուան մէջ, անդիմադրելի հեկեկանք մը կը խեզդէ մեր կոկորդը ի տես այն պարզ, ազնիւ ու անխարդախ նահատակութեանը, զոր ունեցաւ Մանէն և իր նմանները...։

Յիշենք համառօտ գծերով մի քանիսը։

ԿՈԲԵՑԻ ԳՐԻԳՈՐ ԲՈՆՏՈՅԵԱՆ

Ընդհանուր գաղթականութեան հոսանքէն մղուած՝ կովկաս գնաց, ապահով կեանք մը, անարցունք հաց մը ուտելու համար։ Հայրենի հողին վրայ տեսած ու քաշած նեղութիւնները զինք ատելութեամբ լեցուցեր էին դէպի տաճիկ կառավարութիւն... Գրիգորը մտաւ „Ս. Գործին" մէջ, գործեց հաւատքով, վրէժխնդրութեան ծարաւը սրտին... Ոչինչ աւելի բարձր էր իր աչքին՝ քան յեղափոխութիւնը, և նա ոչ միայն կազմակերպութենէն չստացաւ զէնք և ծախք, այլ և իր սեփական դրամով հոգաց իր երեք ընկերներու—Յարութի, Յարթոյի և Մոսկովի ծախքերը, որոնք նոյնպէս իրենց մասնակցութիւն բերած էին „Ս. Գործին"։ Խանի՞ արշաւանքին մասնակից՝ մտան Բասեն ու հոն անհաւասար կռիւ մը վերջ ինկաւ գիտապաստ,—ո՛վ գիտէ ո՞ւր, որ քարի վրայ կամ ձորի մէջ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԵՕՍԷԵԱՆ

Ծնած կոբ 1873 թ.ին։ Սա ալ իր նախորդի պէս նետուեցաւ Կովկաս, գէթ օրապահիկ մը ճարելու համար

իր կարօտ ընտանիքին։ Հոն, մոռցաւ ամեն ինչ և մտաւ խմբերու մէջ։ Մասնակցեցաւ Զանգեզուրի, Նախիջևանի, Սիսիանի հայ-թաթարական կռիւներուն, կողք-կողքի քալելով Քեռիի հետ... Այդ կռիւներու մէջ նա ցոյց տուաւ անվեհեր և անընկճելի կամք։

Օսմ. սահմանադրութենէն վերջ եկաւ իր ծննդավայր, գէթ վայելելու կեանք մը, որ մինչև այն ժամանակ զլացած էր իրեն։ Սակայն արդէն ֆիզիքապէս քայքայած էր, և նա մեռաւ տարի մը վերջ, այրի թողլով մանկահասակ կին մը և երեխայ մը։

ՄԽՕ

Նոյնպէս կորեցի, նոյն ցաւը տանջած է զինքն ալ, ու երբ Մխօն յաջողեցաւ Կովկաս անցնիլ, փարեցաւ յեղափոխական գործին, ընթացաւ նոյն փշոտ ու դըժուարանցանելի ճանապարհներէն, եղաւ Գուրգէնի հետ, մասնակցեցաւ հայ-թաթարական ընդհարումներուն միշտ կատաղութեամբ ու վրէժխնդրութեամբ լի։ 1912-ին մեռաւ իր գիւղին մէջ, որբ թողնելով ամբողջ ընտանիք մը։

ՁԱՔՕ

Իբրև բանուոր անցաւ Կովկաս, մտաւ յեղափոխական շարքերը —գլխաւորապէս Քեռիի խմբին մէջ— և մասնակցեցաւ Ղարաբաղի հայ-թաթարական ընդհարումներուն։ Խմբի „կանդրաբանդիստն“ էր նա, միշտ անվախ ու համարձակ։ Կ'երթար հոն, ուր ղրկէին զինքը. քանի՞ անգամ, առանձինն, դէմ դէմի եկաւ թշնամիներուն հետ ու քանի հեղ — գրեթէ միշտ — յաղթական դուրս եկաւ։

Մի օր, Քեռիէն բաժնուելէն վերջ, ինքը առանձին՝ ուզեց թիւրքեր դաշունահար վար գլորեց։ Այդպէս էր նա, որ իր սեփական հայրենիքի մէջ միշտ գիտցած էր կռանալ ամեն մի թուլամորթ լամուկի մտրակին առաջ։ Յեղափոխական դպրոցը շլացած էր զայն, քաջութիւն ու կորով ներշնչած։ Ու քանի՞ վախկոտներ, քանի՞ ստրկածիներ, որոնք հայրենիքում ապրեր են գաղտագողի, բայց յեղափոխական կեանքի մէջ դարձեր են մէյմէկ իսկական հերոսներ... Ասիկայ ապացոյց է, որ հայը ի բնէ թուլամորթ սա ստրուկ չէ, ինչպէս կը կարծեն շատերը, որ կեանքի դժբախտ պարագաներու բերմամբ, տաճկական բռնակալութեան եաթաղանի տակ միայն թուլցած է։

ՎԱՐԴԱՆ

Բնիկ Պուլանըգ-Խարաղըլ գիւղէն, տակաւին շա՜տ երիտասարդ, փախաւ Կովկաս ու փափաք յայտնեց մըտնելու խմբերու մէջ։ Քեռին — իր խմբապետը, սիրով ընդուներ է զինքը։ Հայ-թաթարական կռիւներու մէջ ունեցած է եռանդուն մասնակցութիւն։ Ղալաճուխի կռիւէն օր մը վերջ — սարսափելի կռիւ մը, ուր Վարդան օր մը անընդհատաբար մարտ է մղեր — յաջորդ օրը կրսպանելի թշնամիներու կողմէ դաւադրութեամբ, երբ առանձին կը ճամբորդէր։ Տարաբախտ զոհի մարմինը յօշոտուած էր ու այլանդակուած...

Այսպէս, հայրենիքէն դուրս, անոնք բոլորը կարողացան օգնութեան ձեռք կարկառել իրենց ազգակից եղբայրներուն, գիտցան վերջապէս թարգման հանդիսանալ տանջուող երկրի երախտագիտական զգացումներուն։

Տակաւին քանի՞ զոհեր երկրի մէջ, միշտ ենթակայ հալածանքներուն բանտ ու կապանքին և անլուր չարչարանքներուն...

ՊՕՂՈՍ ՕՁՈՐԵԱՆ

Բնիկ բիթլիսցի, մի ազնիւ, համեստ ընտանիքի զաւակ ու առաքինի նկարագրով։ Գործեց միշտ զգոյշ ու խելացի կերպով, բայց չկարողացաւ ճողոպրել հայ ու թիւրք մասնիշներէն։ 1904-ին նա բանտարկուեցաւ և բանտին մէջ մեռաւ, քաղցր յիշատակ մը թողլով իր ընկերներու սրտին մէջ։ Ճշմարիտ է, նա չմասնակցեցաւ խոշոր դաւադրութիւններու կամ կռիւներու, բայց եղաւ մեծ իր նկարագրով, իր հոգով, ազնուութեամբ։

ՍԱՐԳԻՍ

Բաւական կրթուած, ինքնուս կրթուած մը։ Ամբողջ եռանդ, ամբողջ անձնուիրութիւն էր նա։ Իր տունը միշտ բաց էր եկող գնացող ընկերի կամ յեղ. ժողովներու առջև։ Օր մը ալ, երբ ժողովի հրաւիրուած էին ընկերները թուրքիկ խմբերու հարցը քննելու համար, տունը կը պաշարուի. բոլորը կը փախչին, իսկ Սարգիսը կը ձերբակալուի։ Տանջանքն ու չարչարանքը անզոր կը լլլան իր բերանէն խոստովանութիւն մը փրցնելու։ Նա կը դատուի Մուշ ու հոն կը մեռնի բանտին մէջ։

Փա՜ռք անոնց յիշատակին։ Համբո՛յր „անանուն“ հերոսներու դամբարաններուն։

Ա. ՋՆԴԻ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

1908 — 1909 Թ. ԶՈՀՈՒԱԾ Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՑԱՆԿը

—

Արտեմ Կոտաբաշեան, մագրասցի (նահատակուած Մուժամբար գիւղ), Նիկոլ, գանձակեցի (նոյն տեղում), Մարտիրոս Զարուխչեան, ախալցխացի (Ալվար գիւղ), Կարապետ, վանեցի (նոյն տեղում), Սեգրակ, Հացիկ գ., տաճկ.-հայ (նոյն տեղում), Միսակ, խասգեղցի, Մուշ (Թաւրիզ՝ Խիսաանի կռուում), Սարգիս, Թաւրիզցի (Լալայի կռուում), Տիգրան Ստեփանեան, ալէքսանդրոպոլցի (Սոֆիան), Յարութիւն, կարինցի (Սոֆիան), Յովհաննէս (Պատիկ), տաճկաստանցի (Սոֆիան), Նուրոյ Խաչատրեան, վանեցի (Սոֆիան), Աւագ Պետ-

ռոսեան, մշեցի (Սոֆիան), Գէորգ Օրատուեան, հաւթեանցի, Սալմաստ (Սոֆիան), Յովսէփ Օհանէսեան, սեդավարցի, Խոյ (Սոֆիան), Բախշի Գաբրիէլեան, ղարաբաղցի, Սէյվան գ. (Սոֆիան), Դաւիթ, կարսեցի (Սոֆիան), Սաեփ. ազնաուրեան, արտվինցի (Ալվար գնդակահարուած), Յարութիւն Գրիգորեան, ղարաբաղցի (Բէդավարի կռուում), Մամիկոն Նազարէթեան, ալէքսանդրօպոլցի (նոյն տեղում), Խաչօ Քաջողլի, ախալցի, Դարալագեազ (նոյն տեղում) Պետրովիչ, նուխեցի (նոյն տեղում), Աւագ Մանուկեան, մշեցի (նոյն տեղում), Զուլումաթ (Օհաննէս), ռատիկցի-Պաս գիւղ, Բաղէշ (նոյն տեղում), Տիգրան (նոյն տեղում), Շամիլ, ղարաբաղցի (Խոյի „էյվաֆի" թաղում), Հրանդ Գիւլմասեան, բրուսացի (Խոյից դուրս), Խորէն Յովհաննիսեան, Ալէքսանդրօպոլ, Հոռում գ. (Ուրմիի Ալմանաւա գիւղ) Վահան Շահինեան, արգավանքցի, Մուշ (վախճանուած Ուրմիայում), Դադաշ, Սալմաստ (Սարամէրիկ գիւղ). Խաչիկ, նոռաձկահայ (Կիւնէրի կռուում), Զարէֆ Ճարակեան, ախալցխացի (Զունուզի), Հրայր (Նաւաս. Գալստեան), փառակեցի (Հին-Ջուլֆա, ռուս սահմանապահ զինուորներից), Գէորգ Միրակոսեան, սեբաստացի (ռումբից անզգուշութեամբ սպանուած 1910 թ.), Վազգէն, սղերդցի (Սաւրա գիւղի մօտ դաւով սպանուած 1911 թ.),

ԿՈՒԿՈՒՆԵԱՆ

Իր դաժան զնանից դուցէ վաղուց մա՞հ էր աղաղակում անսիրտ բռնակալութեան այդ եզակի զոհը... Եւ ահա՛ — ասում են — մահը եկել է ազատարար հրեշտակի պէս վերջ դնելու այդ անօրինակ նահատակութեանը։ Կովկասեան թերթերը ծանուցին, որ Կուկունեան մեռել է Օրեբելի բանտում...

Անսահման վիշտ է պատում ձեզ, երբ փորձում էք պատկերացնել չարչարանքի այն զարհուրելի վիհը, ուր նետուած էր հայ անգրանիկ խմբապետը, իր շղթայակիր գոյութեան մանաւանդ երկրորդ շրջանի մէջ։ Որքա՞ն դաժան պէտք է լինէր կալանաւորի հոգեկան տանջանքը մանաւորապէս վերջին տարում, երբ փաքսուսի անաջող փորձից յետոյ, կրկնապատկեալ ու եռապատկեալ էին նրան կաշկանդող կապանքները...

Աւելին չենք գրում առ այժմ։ Մի օր կը տրուի մանրամասն կենսագրութիւնը այդ բազմատանջ հերոսի, որ հայ յեղափոխական տարեգրութեան մէջ իր եզակի տեղն է բռնելու, իբրև չքնաղ մարմնացումն մի արթնացող հայրենիքի առաջին թոթովանքների, մի ըմբոստացող ժողովրդեան առաջին տենդոտ ու յախուռն թռիչքների։

Կուկունեան

Հայ սերունդները չեն մոռանայ Կուկունեանին, որ մի օր, հայկական ազատամարտի արշալոյսին, իդէալիստական մի հզօր ու անհաշիւ յաբիշատակութեան մէջ գրկեց Պետերբուրգի համալսարանում հայ ըմբոստացման կարմիր դրօշը և ապա սլացաւ իր մի բուռն կարիճների հետ դէպի Կովկաս, անցաւ յաղթական թափորով Արարատեան դաշտից և գնում էր ընկերներով զոհւելու սահմանի միւս կողմը, երբ յանկարծ մի այլ ոսոխ ծառացաւ իր ազատարար կարաւանի առջև և խորտակեց — աւա՜ղ, ընդմիշտ — նրա գեղեցիկ, հերոսական թափը։

Հայ սերունդները կը յիշեն միշտ Կուկունեանին և մոռացութեան ու անտարբերութեան մատուռը երբէք չի բանի այդ հեռաւոր, անյայտ ու պաշտելի գերեզմանի շուրջը։

ՊՐԵՍՍԱՆՍԷ

Առույգ, զարթ, սովորական ռազմային տրամադրութեան մէջ, գրում է Pro Armenia-ի իր յօդուածը, վերջին անգամ պատեցնում է իր խորունկ ու իմաստուն



ՖՐԱՆՍԻՍ ԴԸ ՊՐԵՍՍԱՆՍԷ

նայուածքը ճամաշխարհային քաղաքականութեան քարտէզի վրայ, վերջին անգամ ընդգրկում է արևելեան թատերաբեմը և հայկական „արցունքի հովիտը", գրում է մի քանի հակիրճ նամակներ, ընթրում է և որոճում յաջորդ օրուայ անելիքը, և յանկարծ.. վրայ է հասնում կատաստրոֆը, աչքերը մթագնում են, խաւարը արագարագ թանձրանում է իր շուրջը և ահագին մարմինը փուռում է գետնին, որպէս կայծակնահար, անգամալոյծ..

Երեք օր հոգեվարք, երեք օր անզգայ, անգիտակից զառանցանք...

Մահը ողորմած եղաւ, նա չուզեց տանջել այդ անանման մարդուն, որ բարիք էր միայն գործել իր գեղեցիկ կեանքի ընթացքում, որ եղել էր բոլոր տանջուողների գերագոյն սփոփողը, բոլոր հալածականների և նեղեալների պահապան-հրեշտակը: Մահը չուզեց տանջել այդ հազուագիւտ իդեալիստին, որ արհամարհեց իր անձնական կեանքը, իր փայլուն, հսկայական կարիերը և նետուեց ամեն տեղ, ուր կոչում էր պարտքի ձայնը, վազեց դէպի ամեն կողմ, ուսկից հնչում էր թշուառի, հաշտատարուածի աղիողորմ „ալարմը":

Սեկը—թերևս խոշորագոյնը—համաշխարհային քաղաքականութեան վարիչներից, Teuton-ի և Ֆրանսիայի անզուգական հրապարակագիրը, որոշ ժամանակ բուրժուազական այդ մեծ թերթի էջերից էր, որ շեփորեց

իր լայն ու վսեմ գաղափարները։ Երկար չ'եղաւ այդ շրջանը. Դրէյֆուսեան տագնապը նետել էր Պրեսսանսէին մարտական սոցիալիզմի շարքերը, աշխարհահռչակ հրապարակախօսը գնացել էր ընկերանալու սև, չարքաշ պրոլետարիատին, և այդ հանգամանքը չէր կարող թոյլ տալ նրան՝ մշանջենաւորելու „Տան" թերթի քաղաքական ղեկավարի իր պաշտօնը։ Նա նախընտրեց Humanité-ն։ Ժօռէսի ընկերակցութիւնը շատ աւելի հրապուրիչ էր նրա համար, քան Ադրիան Էբերարինը։ Երկու մեծ ընկերվարականները իրար չափազանց սիրեցին ու յարգեցին և մենք շատ անգամ տեսանք երկուսին թև թևի պայքարելիս։ Քանի՞ տագնապներ և քանի՞ ջարդուած նիզակներ երկուսի կողմից։ Գիտնական-հրապարակագիրը միշտ էլ առաջին շարքերումն էր։ Մեր յիշողութեան մէջ դեռ թարմ է այն առաջին միտինգը, ուր Ժօռէս ներկայացրեց Պրեսսանսէին պարիզեան սոցիալիստ մտաւորականութեանը։ 1900 թւի յունուարն էր. Hôtel des Societés Savantes ի մեծ դահլիճը լեփ լեցուն։ Պրեսսանսէն պէտք է խօսէր Տրանսվալեան պատերազմի մասին։ Ժօռէս նախագահում է և խանդավառ խօսքերով ատենաբանի ներբողն է անում.

—„Ահա—ասում է նա—մի մարդ, ընտիրներից մէկը, բուրժուա հասարակութեան մտաւոր գագաթներից, որ մի վսեմ ու առնական volte-face-ով լքել է իր դասակարգը և անցել ընկերվարական շարքերը... Ահա՛ մի մարդ, մի ճշմարիտ մտաւորական, որի ջինջ գիտակցութիւնն ու բարձր խիղճը չկարողացան հանդուրժել Դրէյֆուսեան կրիզի ընթացքում մերկացած բուրժուազական աղաղակող ոճիրները, ըմբոստացան և այժմ ահա բերում են մեզ, ընկերվարականներիս, համաշխարհային պրոլետարիատին մի նոր լոյս ու խրախոյս ամենօրեայ պայքարի մէջ"...

Ահագին դահլիճը բառացի թնդում է երկար ու որոտուն ծափերից, „կեցցէ՛ Պրեսսանսէ" և „կեցցէ Ժօռէս" աղաղակներից։

Վերջին անգամ տեսայ երկու մեծ հռետորներին ութ ամիս առաջ, քով քովի ամբիոնի վրայ, պարիզեան աւելի ընդարձակ մի սրահի մէջ, հսկայական Salle Wagrame-ում։ Բողոքի միտինգ էր ընդդէմ պատերազմի ու միլիտարիզմի։ Սրահը դարձեալ լեցուն էր, ինչպէս միշտ, երբ Ժօռէսը կայ խօսողների մէջ։ Վեց-եօթ հազար բազմութիւնը ամենախորին ուշադրութեամբ ունկնդրում էր հռետորներին, որ երեք էին — Վայեան, Ժօռէս և Պրեսսանսէ։ Վերջինը օրւայ հերոսն էր։ Նա միտինգային ճառ չէր խօսում, չէր սասանեցնում ունկնդիրներին ձայնի հզօր եւլէէլներով, չէր շատ որոտում կապիտալիզմի, միլիտարիզմի և աշխարհի հրամանատարների դէմ, նա չէր ճառում, այլ ատենաբանում էր, նրա նպատակը, պերճախօս լեզուով համաշխարհային պատմութիւնն էր բառբառում, Եւրոպայի բարդ ու կնճռոտ դիւանագիտական կացութիւնն էր պարզում մեր առջև, որպէս մի յստակ հայելիի մէջ. նա վերլուծում էր ու համադրում անդադար, թափում էր անդուլ ու առատահոս շատրւանի պէս փաստերի, իրողութիւնների և թւերի տարափը, որ անսպառ չափերով ամբարուած էին նրա ահագին յիշողութեան մէջ. Ծովացած բազմութիւնը հեւիհեւ հետևում էր ճարտասանական այդ սքանչելի մարզանքին, զուր ամենանուրբ, ամենաերաժշտական ֆրանսերէնի հետ միացած էին կուռ, երկաթէ տրամաբանութիւն, պատմութիւն ու պատմափիլիսոփայութիւն, վերջապէս քաղաքական կացութեան մի եզակի, մի համապարփակ ծանօթութիւն։

Ցուզիչ էր տեսնել այդ վայրկեաններին ծխի ու քրտինքի մէջ կորած պարիզեան պրոլետարիատը, որ լսում էր կրօնական լռութեան մէջ, որ չէր ուզում մի բառ անգամ բաց թողնել այդ հիւթալի ատենախօսութիւնից... Զգացի, որ սխալ է ոմանց կարծիքը, թէ ժողովուրդը, ամբոխը միշտ սիրահար է ժեստերի ու բացականչութիւնների, գոռ ու ճռռում մարզանքների, զգացի, որ նա էլ գիտէ գնահատել լուրջ, ներհուն ատենախօսութիւնները։

Տեսարան էր.. Պրեսսանսէն այդ երեկոյ ծափահարուեց անհամեմատ աւելի, քան Ժօռէսը։ Վերջինը, հարկաւ, մնում է դարձեալ խօսքի անման, եզակի Վարպետը Ֆրանսիայի մէջ, գուցէ և ամբողջ աշխարհում. բայց երբ նիւթը միջազգային քաղաքականութիւնն էր—ոչ ոք, ոչ իսկ Ժօռէսը կարող էր գերազանցել Պրեսսանսէին։

Սակայն, ներքին քաղաքականութեան խնդիրների մէջ ևս մեր հանգուցեալ բարեկամը ունէր ահագին հեղինակութիւն։ Այդ խնդիրներն էր ծեծում նա 15 տարուց ի վեր բազմամարդ միտինգների մէջ, Պարիզում ու գաւառներում. ամբողջ Ֆրանսիան չափչփել էր նա ագիտացիական իր թափօրների ընթացքում, որ կատարում էր ամեն տարի, իբրև „Մարդկային Իրաւունքների Դաշնակցութեան" նախագահ. անում էր երբեմն այդ թափօրները, իր հետն առնելով երիտասարդ Ժան Լօնգէին, որ նախագահում էր միտինգներին. իսկ Դրէյֆուսեան ճգնաժամի ընթացքում, երբ Ֆրանսիան բաժանուել էր երկու մենամարտող բանակների, երբ նացիոնալիստ վայրագ խուժանը պատրաստ էր ներկել հայրենիքը Ջօլաների ու Պիկարների արիւնով... Պրեսսանսէի անբաժան ընկերն էր Պիէռ Կիյեառը, նրա հետ միասին շրջում էր գաւառները, և երկուսը մի անգամ Ավինիոնի մէջ քիչ մնաց, որ զոհ գնային մոլեռանդ խուժանի կատաղութեանը։ Երկար ու միատեղ գործունէութիւնը „Մարդկային Իրաւանց Դաշնակցութեան" և Հայկական Խնդրի մէջ՝ ստեղծեց մի սրտառուչ կապ, հօր ու որդու յարաբերութիւններ Պրեսսանսէի ու Կիյեառի միջև, և երբ որդին մեռաւ, հայրը մնաց անմխիթար։ Ինքը՝ ազնիւ,

շիտակ ու վեհանձն մի հոգի՝ նա շատ էր սիրել „Պրօ Արմենիա“-ի խմբագրապետի նոյնքան ազնիւ ու շիտակ դէմքը։ Ներդաշնակութիւնը կատարեալ էր երկու բնաւորութիւնների միջև, թէև մէկը ընկերվարական էր, միւսը անարխիստ։ Լաւ Ֆրանսիացի քաղաքացիներ էին երկուսն էլ, տոգորուած Մեծ Յեղափոխութեան աւանդութիւններով, պատրաստ նետուելու ամենաբուռն ու ամենավտանգաւոր կռիւների մէջ՝ յանուն Մարդու և Քաղաքացու բռնաբարուած իրաւունքների։

***

Ցաւն ու ափսոսանքը ընդհանուր է այդ անակնկալ մահուան առթիւ. ամենաանհաշտ հակառակորդներն անգամ խոստովանեցին Պրեսսանսէի հոգու մեծութիւնը, դրատեցին նրա անսովոր երիւդիսիօնն ու մտաւոր կարողութիւնները։ Անգլիական մեծ օրգանները և ամենից առաջ *Times*-ը, յայտարարեցին, որ Պրեսսանսէի ազդեցութիւնը, իբրև առաջնակարգ դիւանագէտ-գրողի, իբրև անգլիական ու համաշխարհային կեանքին քաջածանօթ հրապարակախօսի, տարածւում էր նոյնիսկ Մեծ Բրիտանիայի հանրային կարծիքի վրայ։

Ցաւն ու ափսոսանքը ընդհանուր է, բայց այդ կորուստը, համամարդկային լինելով հանդերձ, հայերի մէջ է, որ յարուցանում է ամենախոր կսկիծը։ Հայ ժողովուրդն է, որ որբ է մնում, կորցնելով իր ամենամեծ և ամենահմուտ փաստաբանին։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն է, որ զրկւում է իր ամենաանձնուէր եւրոպացի բարեկամից։ Մի ժամանակ այդ բարեկամն էլ շատերի պէս մոլորուած էր հայկական դատի և հայ յեղափոխական շարժումների ծագման ու էութեան վերաբերմամբ։ Մի ժամանակ — մասամբ Հանօտօ կոչուած թշուառականի ներկայացրած տեղեկութիւնների ազդեցութեան տակ — նա էլ ոչ-շատ բարեկամական զգացումներ կը տածէր դէպի այդ շարժումներն ու նրանց գլխաւոր դերակատարները։

Անցան այդ օրերը։ Հանօտօն շուտով մերկացաւ իր ոճրանիւթ էութեան մէջ և Պրեսսանսէն այնուհետև մէկն եղաւ այդ վատ մարդուն խարազանողներից։ Պրեսսանսէն մէկն եղաւ այն վեհանձն ֆրանսիացիներից, որոնք 1895—96-ի ջարդերից ի վեր հրապարակ եկան իրենց գրչով ու խօսքով պաշտպանելու Արևելքի Մեծ Նահատակին։ Պրեսսանսէի սիրտը արիւնւում էր ի տես այդ անլուր ու անդագրում նահատակութեան, որին ենթարկւում էր մի փոքրիկ, ընդունակ ու աշխատասէր ժողովուրդ։ Այդ ժողովրդի բարեմասնութիւններին նա ի մօտոյ ծանօթանալու առիթ էր ունեցել իր երիտասարդ օրերում, իր 8-ամեայ գործունէութեան ընթացքում, Ն. Պոլսոյ մէջ, իբրև քարտուղար Ֆրանսիական դեսպանատան։

Երկար կը լինէր միառմի յիշատակել այդ սքանչելի մարդու ծառայութիւնները հայկական գատի համար։ Վերջին 15 տարուայ ընթացքում Եւրոպայի մէջ „Դաշնակցութեան“ յղացած բոլոր ձեռնարկներում նա ունեցել է ամենամտիկ, ամենագործօն մասնակցութիւն։ Պիէռ Կիյեառի հետ էր նա, երբ հիմնւում էր առաջին „Պրօ Արմէնիա“ն։ Քանի՞ ժողովներ ու մտերմական խորհրդակցութիւններ մեզ հետ Պարիզում ու Ժընէվում „Դրօշակ“-ի խմբագրատան, տակաւին Քրիստափորի օրով... Քանի՞ հրապարակային ատենախօսութիւններ Ժընէվ, Պարիզ, Բրիւսսէլ, Լօնդօն։ Ամեն անգամ սրահը լեցուն էր ծայրէ ծայր և ամեն անգամ մեծ ֆրանսիացին յուզմունք ու անվերջ ծափեր էր յարուցանում հազարաւոր ունկնդիրների մէջ։

Նոյն տեսարանը ֆրանսիական պարլամենտում, ուր Պրեսսանսէն հայոց հարցի տագնապալի վայրկեաններին ուղղում էր իր հարցապնդումները Ֆրանսիայի կառավարութեան։ Պարզ, սովորական հարցապնդումներ չէին դրանք, այլ լուրջ, բովանդակալի ատենախօսութիւններ, ուր հայ դատի պատմութեան հետ նա արձանագրում էր և հայ շարժման այլևայլ դրւագները, թիւրք-համիդեան բարբարոսութիւնների հետ յիշատակում էր մեր Սերոբներին ու Անդրանիկներին, ոգևորւում էր նրանց սրտոտ ու անձնազոհ թռիչքներով, ջատագովում էր հայ ֆէդայուն։

Ձենք ծանրանում „Պրօ Արմէնիա“-ի վերջին շրջանի վրայ։ Ձենք պատմում, թէ որպիսի սիրով Պրեսսանսէն սնանձնեց տնօրէնի դերը, որպիսի հազւագիւտ անշահախնդրութեամբ՝ նա որոշեց շարունակել իր հոգևոր զաւակի՝ Կիյեառի պաշտօնը ի նպաստ բազմատանջ հայ ժողովրդի։ Ձենք պատմում այն առաջին ժողովը, որ տեղի ունեցաւ թերթի հրատարակման նախօրեակին, 1912-ի վերջերում, Պրեսսանսէի տանը, Վիկտոր Բերարի և այլ ֆրանսիացիների ներկայութեամբ։

Մինչև վերջին շունչը մեր թանկագին բարեկամը լաւատես էր մեր դատի վերաբերմամբ և շարունակ խրախուսում էր մեզ։ Նա կուզէր, հարկաւ, այլ ձևի լուծում, նրան զայրացնում էր, որ Եւրոպան ռուս-գերմանական համաձայնութեանն էր յանձնում Հայաստանի ճակատագիրը։ Նա շարունակ պահանջում էր Հայկական Լիբանան Եւրոպայի հաւաքական հովանաւորութեան տակ։

Այսօր այդ Լիբանանը, կարելի է ասել, ծրագրուած է արդէն, թէև սոսկ Ռուսաստանի և Գերմանիայի հովանաւորութեան տակ։ Ինչ ձև էլ ստանայ Հայաստանի նոր ռէժիմը, ինչպէս էլ որ անօրինի այսուհետև մեր ճակատագիրը, — հայ ժողովուրդը յաւիտենօրէն երախտապարտ կը մնայ իր արևմտեան բարեկամներին և Ֆրանսիս դը Պրեսսանսէի անունը հիացմունքով, սրբու-

թեամբ կը հոլովի միշտ մեր հերոսների ու նահատակների անունների հետ, քանի դեռ կ'ապրի Հայաստանի լեռներում ու հովիտներում հայ սերունդ և հայ բառբառ։

Մ. Վ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Շահստան, 28 դեկտեմբեր

Հակաբախտիարական շարժում. — Ցայտնի է արդէն, որ Պարսկաստանի ներկայ կառավարութեան հաստատելու օրից՝ սկիզբն է առել հակաբախտիարական մի շարժում, որի արիւնոտ արտայայտութեանը հանդիսատես եղանք ամառը, մայրաքաղաքում, բախտիարների և ժանդարմների ընդհարման ժամանակ։

Հարցը կայանում էր առաջինների զինաթափման մէջ։ Եւ որովհետև բախտիարների հովանաւոր համարող անգլիական բաղաքականութիւնն էլ համաձայն յայտնեց պարսիկ դահլիճի այդ որոշմանը, ուստի և զինաթափութիւնն ու բախտիարների մի մասի մայրաքաղաքից վտարումը իրագործուեց։

Մայրաքաղաքում նրանց ազդեցութիւնն ու ոյժը ջլատելուց յետոյ, հակաբախտիարների շարժումը երևան եկաւ երկրի հարաւային մասում — բախտիարների ազդեցութեան բուն շրջանում — Սպահանում, Քիրմանում, Եազդում, մի ուրիշ կերպարանքով։ Սկզբում խուլ, հատու կտոր բողոքներ, ապա հետևեց վերոյիշեալ քաղաքների „ամբողջ ազգաբնակութեան" անունից հեռագիրների մի տարափ, ներքին գործոց մինիստրութեան մէջ և այլուր։ Այդ դիմումներով „ազգաբնակութիւնը" պահանջում էր պաշտօնանկ անել իրենց նահանգապետներին։

Շարժումը աւելի մեծ չափերի հասաւ և մասսային բնոյթ ստացաւ Սպահանում, ուր ազգաբնակութիւնը բազարը փակելով մզկիթներում բէստ նստեց և բողոքը աւելի ուժեղ հնչեցնել փորձեց։

Եւ թէև տեղական նահանգապետների սպառնալիքով շարժումը զսպուեց, բայց և այնպէս կառավարութիւնը, հիմնուած այդ բողոքների վրայ, 3 քաղաքի նահանգապետներին էլ պաշտօնանկ արեց։ Այդուհանդերձ նրանց տեղը նորից բախտիարներ նշանակեց։ Այսպէս օրինակ, Սպահանի նահանգապետ նշանակեց նախկին մինիստր-նախագահ Սամսամը-Սալթանէին, Քիրմանի՝ նոյն տեղի նահանգապետի եղբայր Սարդար-Մօհթաշամին և այլն։

Այս անուանումները — բոլոր մանաւանդ առաջինը — ըստ էութեան, մի վարկաբեկումն էր բախտիարների համար։ Մի քանի ամիս առաջ ամբողջ Պարսկաստանի կառավարիչ համարուող պրեմիէր Սամսամը-Սալթանէն նշանակուում էր ինչ որ Սպահանի նահանգապետ։

Զգալով այդ նուաստացումը, Սամսամը սկզբում վերջնականապէս հրաժարուում էր իրեն արած պատուից, բայց յետոյ, անգլիական դեսպանատան ներշնչմամբ, նա ստիպուած եղաւ ընդունել վզին դրուած պաշտօնը և Սպահան գնալու համաձայնութիւնը յայտնել։

Այս անգամ մի աւելի ծանր վարկաբեկում էր սպասում նրանց։ Ինչ խօսք որ բաւական չէր նրա համաձայնութիւնը։ Մի այնպիսի դրութիւն էր ստեղծուել, որ գնալիք վայրի ազգաբնակութեան կարծիքն էլ նշանակութիւն ունէր։ Իսկ սա դէմ էր։ Ինչպէս Սպահանից, նոյնպէս և Քիրմանից ու Եազդից նորից բողոքներ տեղացին, նորից ազգաբնակութիւնը բազարդուլով և մզկիթները բէստ նստելու ցոյցերով բողոքեց նորընտիր նահանգապետների դէմ և բացարձակ շեշտեց բախտիարցի նահանգապետ չընդունելու իր որոշման վրայ։ Խնդիրն ուրեմն իր իսկական կերպարանքով էր երևան գալիս։ Մինչ այդ, եղած շարժումը իր հիմքում հակաբախտիարական ձգտում ունենալով հանդերձ, որոշ շրջաններում ցանկալի էր լինում բացատրել իմաստի առարկայ վայրերի նահանգապետների անհատական պակասութիւններով։ Այժմ հարցը այդ նեղ շրջանակից դուրս գալով ընդհանուր ցեղին էր վերաբերում։

Եւ այդ աւելի ևս շեշտուում էր այն հանգամանքի պատճառով, որ երբեմնի պրեմիէրի — ամենաաջքի ընկնողը այդ ցեղի — դէմ աւելի ուժեղ էին բողոքում և Սպահանում աւելի լուրջ կերպարանք էր ստանում։ Ղեկավար հանդիսացող կրօնապետ-մուշտէյիդների պատուէրով շրջակայ գիւղերից քաղաք էին թափուել մօտ 8—900 գիւղացիք և հաւաքուելով Մէյդան-Շահ կոչուած վայրը, հոգևորականութեան հրահանգին էին սպասում։ Միւս կողմից բախտիարի խմբեր էին կենտրոնանում քաղաքի մօտակայքում։

Այնտեղ Սամսամի դէմ առաջ էր քաշուած Զիլլի-Սուլթանի թեկնածութիւնը։ Այդ թեկնածութիւնը հրապարակ է հանուում և նրա համար ուժեղ պրոպագանդ մղուում տեղական ռուսաց հիւպատոսարանի և ռուսաց բանկի դիրեկտորի կողմից։

Ինչպէս մինչև այժմ, այս դէպքում էլ, երևի ռուսական ագէնտների այդ ուղղութեամբ արած քայլերը այնքան բացարձակ և գրգռիչ են եղել, որ զայրացրել են մինչ այդ համբերող բախտիարցիներին, որոնցից մէկը ծեծում է ռուսական հարբած ուրադնիկին, երբ սա իրեն խիստ անվայել է պահելիս լինում բազարում։

Եղած պահանջի հիման վրայ, կառավարութեան կարգադրութեամբ (և մայրաքաղաքում գտնուող բախտիարի ցեղապետների համաձայնութեամբ) Ամիր-Մուշահիրը (որի մարդկանցից է լինում ծեծող բախտիարին) վերջը համաձայնում է ներողութիւն խնդրել ռուսաց հիւպա-

տոսից անհաճոյ դէպքի առթիւ և այդպիսով խնդիրը վերջանում է։

Ի տես օրէցօր լայն ծաւալ ստացած հակաբախտիարական այդ շարժման՝ վերջնիս ցեղապետները ժողովներ են գումարել գործունէութեան ուղի ընդգծելու համար։ Թէ ինչ որոշումներ են տուել, ի հարկէ յայտնի չէ, բայց դրանից յետոյ բողոքող քաղաքները հանգըստացել և նշանակած նահանգապետներին ընդունելու համաձայնութիւն տուել։

Այժմ նահանգապետները պատրաստութիւն են տեսնում իրենց պաշտօնատեղին մեկնելու։ Անմիջապէս չճանապարհուելու պատճառն այն է, որ մի քիչ էլ սպասում են, մինչև մոքերը վերջնականապէս խաղաղուին։

Փորձենք այժմ գտնել այն ձեռքը կամ մատները, որ այնքան ճարպիկ կերպով բախտիարների վարկաբեկումն են պատրաստում։

Ինչպէս վերևում նկատեցինք, բախտիարների զինաթափումը կատարուեց կարելի է ասել միայն այն համաձայնութեան շնորհիւ, որ անգլիական կառավարութիւնը տուեց կառավարութեան։

Իր առևտրական յաջողութեան համար երկրի խաղաղութեան ձգտող անգլիական քաղաքականութիւնը գտնելով, որ բախտիարների՝ երկրի հանգստութիւնը վրդովող և աւազակային քայլերը անխուսափելիօրէն ժողովրդական բողոքներ պիտի առաջ բերէն, համաձայնում է նրանց զսպելու առաջարկին։

Զսպման այդ որոշումը տրւում է այն ժամանակ, երբ կաբինետի ղեկավարը ըստ էութեան հանդիսանում է ներքին գործոց մինիստր, բախտիարների երդուեալ հակառակորդ Էյնը-Դօվլէն։ Սա, Անգլիայի հետ համաձայնութիւն ունենալով, վստահաբար իր վրիժառութեան գործին է ձեռնարկում։ Մայրաքաղաքում իր նպատակին հասնելուց յետոյ, նա իր դաւերը շարունակում է և՛ բախտիարցիների բուն համարուող հարաւային Պարսկաստանում։

Եւ գուցէ այստեղ էլ նա նոյն յաջողութիւնը գտնէր — քանի որ բախտիարի երկու հոսանքներից մէկի ձգտումներին համապատասխանում էր Սարդար-Ասադական հոսանքի պարտութիւնը — եթէ նորից երևան չգար անգլիական քաղաքականութիւնը, որի համար երբէք նպաստաւոր չէր իր հաւատարիմ դաշնակից համարուող բախտիարների այդքան անակնկալօրէն վտարումը ասպարէզից։ Եւ ինչպէս ասացինք, Անգլ ներշնչումների ազդեցութեամբ բողոքող քաղաքների ամբոխները դադարեցնում են գործադուլը, բաց անում բազարը և հաշտւում բախտիարի նահանգապետներ ունենալու մաքին։ Չմոռանանք յիշել, որ հակաբախտիարական շարժումը համապատասխանելով ռուսական քաղաքականութեան՝ խրախոյս էր գտնում և նրա կողմից։

Չլինէր դաւեր նիւթող ձեռքը, չլինէին կրկնակի ներշնչումները և ջուրը պղտորող մատները, այս շարժումները կը նկատուէին իբր ժողովրդական գիտակցութեան մի գեղեցիկ արտայայտութիւն, արդար մի բողոք բախտիարների գործադրած բռնութիւնների, թալանների և կաշառակերութեան դէմ։ Իսկ ներկայ իր բնոյթով նրանք գալիս են մի աւելորդ անգամ շեշտելու պարսիկ ժողովրդի անգիտակից, խաւար վիճակն և տգիտաբար օտար շահերի օգտին գործիք դառնալու ցաւալի երևոյթը։

Սալար-Դօվլէի մեկնումը. — Արիւնի վտակներ, մեծամեծ աւերումներ պատճառող և նիւթական ու ռազմական այնքան միջոցներ սպառող Սալար-Դօվլէի սխրագործութիւններին վերջ տալու համար, Իրանը շնորհակալ պիտի լինի ռուսաց քաղաքականութեան կրած փոփոխութիւնից (այդ հարցի առթիւ)։ Մի փոփոխութիւն, որ զուգորդւում է Անգլ. դէպի բախտիարներն ունեցած քաղաքականութեան փոփոխութեանը։

Ռուսական վերջին ընթացքը Սալար-Դօվլէի հարցում երկու կերպ կարելի է բացատրել. — կամ այն է, որ երկրի վերջնական խաղաղացման վերաբերմամբ երկու հովանաւոր պետութիւնների մէջ նոր համաձայնութիւն է կայացել և այդ մաքով վստահացումներ են տուել խնամակալին և կամ թէ ժանդարմների օրէցօր կազմակերպելու երևոյթը որոշ երկիւղ է ներշնչել ռուսական դիւանագիտութեան։ Բացատրենք վերջին ենթադրութիւնը։ — Ինչպէս յայտնի է, Համադան Քիրմանշահի շրջանը համարւում է ռուսական ազդեցավայր։ Յայտնի է նոյնպէս, որ Սալար-Դօվլէն գործում էր մեծ մասամբ այդ շրջաններում։ Մինչև վերջին ժամանակներս նրան զսպելու համար ուղարկուել են բախտիարցիներից և հայ ու պարսիկ մուջահիդներից կազմուած բանակներ։ Ներկայ մոմենտում այդ բանակները ցրուել են և նրանց փոխարէն կազմակերպուել է, շէֆդների ղեկավարութեամբ, ժանդարմերիան, որ անգլիական դիւանագիտութեան կողմնակից է համարւում։

Արդ, Սալար-Դօվլէի սկսելիք խռովութիւնների դէպքում, նրա դէմ պէտք է ուղարկուէին, բնականաբար, ժանդարմական գնդեր. կամ ուրիշ խօսքով՝ ռուսական շրջանն էլ պիտի մուտք գործէր „անգլիական զօրքը“, մի բան, որին ամեն կերպ դիմադրում է ռուսաց քաղաքականութիւնը, աշխատելով յօգուտ „իր զօրքի“ — պարսիկ կազակների։

Ահա այդ պատճառներով 600 պարսիկ կազակներ ռուս զօրավար Զախարչենկոյի հրամանատարութեամբ գնում են Սալար-Դօվլէի դէմ։ Բանակը տեղ հասնելուց յետոյ, առանց կռուի „խենթ իշխանը“ ներկայանում է բանակի հրամանատարին։ Թէ ինչ խօսակցութիւն է տեղի ունենում նրանց մէջ, յայտնի չէ։ Սալարը նորից անհետանում է և երկար ժամանակ լուր չի լինում նրա ապագայ անելիքներից։ Վերջում նա

անակնկալ կերպով գալիս և ապաստանում է Քիրմանշահի ռուսաց հիւպատոսարանը։

Այդ օրուանից ռուսների միջնորդութեամբ նրա և կառավարութեան միջև բանակցութիւններ են սկսւում, որ յանգում են հետևեալ եզրակացութեան.

ա) Սալար-Դովլէն թողնում է Պարսկաստանը և տարեկան 8000 թուման ռոճիկ է ստանում կառավարութիւնից։ Իրան վերադառնալու դէպքում՝ դադարեցւում է ռոճիկը։

բ) Սալարի մի երկու կտոր կալուածներն անցնում են կառավարութեան, որը նոյնպէս իր վրայ է վերցնում նրա՝ ռուսաց բանկին ունեցած պարտքերը։

(Զը քննենք, թէ ինչո՞ւ է ռուսաց բանկը մի բախտախնդրի և երկրի խաղաղութիւնը վրդովողի պարտք տուել։ Նոյնպէս մի կողմ թողնենք այն թէ ինչպէս եղաւ, որ վախեցած կօզակների ներկայութիւնից, առանց նոյնիսկ կուի՝ նա եկաւ և անձնատուր եղաւ, ապա եղած ներշնչմամբ՝ ռուսաց հիւպատոսարանն ապաստանեց։ Այդ արտառոց երևոյթների քննութիւնը մեզ հեռու կը տանէր)։

Համաձայնութիւնը կնքելուց յետոյ, մի վաշտ կօզակների պաշտպանութեամբ, Սալար-Դովլէն Քիրմանշահ-Համ դան-Ղազվին-Ռաշտ-Էնզելի գծով Եւրոպա անցաւ և վերջապէս Քիրմանշահի շրջանն ազատուեց երկուստեք եղած — Սալարի և կառավարչական բանակի — աւերումներից ու կողոպուտներից։

Նրան ընկերակցում էին Զահիարչէնկօ և Ղազվինից հիւպատոս Ռօմանովսկի։ Երկուսն էլ ռուսաց դեսպանատան շնորհակալութեան են արժանացել իրենց մեծ ծառայութեան համար։ Կօզակների մի մասը Քիրմանշահ մնալով, միւս մասը մեծ շքով մայրաքաղաք վերադարձաւ։

Պարսից մամուլը վերջերս աւելացել է ազատական մի թերթով։ Նախկին „Բարգը“ համարեա հին խմբագրութեամբ վերսկսել է հրատարակուել և անխնայ քննադատել երկրի ղեկավարներին, դարմաններ առաջարկել երկրի վերածնութեան վերաբերմամբ և պայքարել օրէցօր աւելի ոյժ ստացող հին ժաքերի դէմ։ Թւում է թէ թերթն ուզում է հաւատարիմ մնալ իր նախկին սկզբունքներին ու ուղղութեան։ Ուրախալի է նրա վերերևումը և լաւ ժամանակին, երբ հասարակական կեանքի հետ տափակացել էր նաև մամուլը։ Ուրախալի է և քաջալերութեան արժանի նրա պայքարը։ Սակայն կասկածելի է նրա յարատև գոյութիւնը։

Կ. Կ.

ԹԵՐԹՕՆ

ԻՄ ԲԱՆԴԸ

LX

ԵՐԿՈՒ ԾՈՎ

Բանդապետն ինձ արտօնեց „ո՛չ յօրինակ այլոց“, միջանցքի լուսամուտի առաջ նստել ու ծովը վայելել գրեթէ ամբողջ օրը։ Սա սոսկ արտօնութիւն չէր իմ տանջալից, իմ յիմարական կացութեան մէջ մի կատարեալ փրկութիւն էր ինձ համար։ Մի քանի րոպէ աւելորդ զբօսանքն իսկ՝ հազագիւտ բախտ է միշտ կալանաւորի համար, իսկ այս խենթացնող շոգերի մէջ, այն սարսափելի պայմաններում լայնարձակ ու ազատ ծովը դիտել խոհերի անձնատուր՝ սա գերազանցում էր իմ ամենահամարձակ, ամենահրապուրիչ երազը։

Վաղ առաւօտից դուրս փախայ մեր գարշահոտ սենեակից, ուր իմ մօրթիամոլ դժբախտ ընկերակիցս արդէն մերկացած՝ թունաւոր ասեղները շարում էր մարմնի վրայ։ Միջանցքը պարապ էր։ պահապանն էր քայլում յետ ու առաջ՝ տարտամօրէն սուլելով մի վատ եղանակ, կամ մօտենում, նայում էր ներս դռների փոքրիկ բացուածքներից։ Ցեռևիցս լսող շղթաների համաչափ շառաչիւնը ուշքս գրաւեց։ վեր եկան չորս կալանաւորներ մի վերմակի չորս անկիւններից բռնած՝ որի մէջ ընկած էր մի ուժասպառ, գրեթէ ուշաթափ հիւանդասացին որ գիշերն այսպէս ուշաթափուեց սաստիկ տօթից։ Հիւանդին ձգեցին մի երկար նստարանի վրայ և դուրս գնացին։ Դեղատնից եկաւ Ֆելդշերը։

— Աա, էլի բերին, սպասիր աղաւնեակս, ասաց նա, իսկոյն ներս գնաց դեղատուն ու շուտով յետ եկաւ թղթի մի փաթթոց ձեռքին։ Նա արագ-արագ բաց արեց հիւանդի փորն ու կուրծքը և ապա մի քանի թերթեր փակցրեց նրա մարմնի վրայ։

— Հիմա դու իսկոյն կը լաւանաս, իսկոյն, ասաց նա, երկդիմի ու խորհրդաւոր ժպտով ինձ նայելով։

— Ի՞նչ է այդ հարցրի։

— Ոչինչ, ամենահզօր ճար, մանանեխի թերթիկներ։ Թո՛ղ մորթին մի լաւ այրուի, կը տեսնէ՛ք, ինչպէս կը վերկենայ, կը փախչի։ սուտ հիւանդ է, սրանց հետ ուրիշ կերպ վարուել անկարելի է։ տ՛ր, կը տեսնէք, հիմա կը փախչի, այդ ուշաթափ մարդը։

Եւ նա ձեռքով պինդ սղմում էր մանանեխի թերթերը հիւանդի մորթու վրայ։

Շուտով մորթին այրուեց, կսկծաց, հիւանդը ցնցուեց, ճչաց, տնքաց, կծիկ-կծիկ թաւալ տուեց ցաւից, բայց չվերկացաւ, չփախաւ, որովհետև ոյժ չունէր... դժբախտը ծանրապէս հիւանդ էր։

Ֆելդշերը գլուխն օրօրեց, իր տարդի, իր անողորմ փորձից ամօթահար։

— Ուրեմն հիւանդ է, մռմռաց նա, վերցրեց մանա-

ներսը՝ թողնելով հիւանդի մարմնի վրայ լայն, կարմիր վէրքեր, ինչպէս եփած ճակնդեղ, ապա կարգադրեց նրան սենեակ ներս տանել մինչև բժիշկը գայ տեսնի։ Բժիշկը գալու էր երկու օրից յետոյ։ Հիւանդը նվվում էր, հիւանդը վայում էր...

Հեռացայ՝ որ չլսեմ ձայնը։

Ալ ու ձախ՝ բանդասենեակների դռների վրայ կաւիճով նշանակուած էր ներսի հիւանդների թիւը։ Մէկի վրայ կարդացի՝ „Երկուսը ողջ, մէկը՝ մեռած“։ Ներս նայեցի. երկու հոգի դեռ ծանր տնքում էին երկու պատերի տակ, իսկ երրորդ թախտի վրայ անշարժ ու սառն՝ ձգուած էր մի դիակ, մի ահագին դիակ։ Ճանաչեցի. երկու օր առաջ նա իմ սենեակի դրան բացուածքից տենդից ճաքճաքուած լեզուն էր ցոյց տալիս և մի կաթ սառուց խնդրում։ Այժմ մեռել էր մարդը շղթաները ոտներին։ Առաջ անցայ։

Հարևան սենեակում երկու հոգին էին. մէկը տնքում էր անոյժ, իսկ միւսը՝ խեղդող տենդի ուժգնութիւնը մի փոքր մեղմելու համար, երկու ձեռքով սղմել էր ճակատին ջրով լի կաւէ ամանը, որ նա հազիւ էր կարողանում պահել իր չորացած, վտիտ բազուկներով։

Հանդիպակաց սենեակում վեց հոգի կային, վրացի գեղատեսիլ տղամարդիկ, ոմանք թախտերի վրայ պարկած, ուրիշները պատէ պատ ընկած ինչպէս հրդեհով բռնուած բնակարանում և ցաւի ու անէծքի ճիչեր էին արձակում։ Լիճակները գիտէի. նախընթաց օրը ֆելդշերը կեղտոտ ասեղներով նրանց ինչ որ դեղ էր սրսկել և ամենքն էլ վարակուած, բորբոքուած խոցերով տառապում էին, սպասելով բժշկին, որ շաբաթը երկու անգամ էր բանդ այցելում։

Դէպի ծովն էի շտապում, նրա գեղն ու բոլորը վայելելու և առաջս ցցուեց այս միւսը՝ մարդկային տանջանքի ծովը, որ եռում ու փրփրում էր չորս կողմի սենեակներում, այս դռների յետևում, այս անհրապոյր ու մռայլ միջանցքում։ Յետոյ արածս անվտանգ չէր, դռներից ներս նայելը խստիւ արգելուած էր և վարմունքս կարող էր պատճառ դառնալ, որ ինձ վերստին փակէին։

Եւ ինչո՞ւ նայել, ինչո՞ւ դիտել այս բոլոր սոսկումն ու գարշանքը, մտածում էի ես, երբ միանգամայն անզօր եմ մազի չափ անգամ մեղմել տառապողների ցաւերը։ Կեանքը յաւիտենական դժոխքն է, բանդը՝ իր հիւանդանոցով նրա մի մասը։ Որոշեցի առաջ անցնել դէպի լուսամուտը, որ գտնուում էր միջանցքի արևելեան ծայրին։ Վերջին սենեակը, սակայն, ուշադրութիւնս գրաւեց և ես նորից կանգ առայ։ Այստեղ երկու հոգի էին—մի կօզակ և մի կոյր ծերունի թիւրք։ Զինական բեխերով, լիքը, կոլոր դէմքով, մօնգոլական մանր աչքերով ու դուրս ցցուած այտերով այդ կօզակը մի երաշող էր, մէկն այն ինքնատիպ, խոհուն ու պարզասիրտ ռուսներից, որոնք առանց կրթութեան չգիտես ինչ մի ներքին մղումով սիրում են ապրել բնազդական միստիկ մտածումներ, փնտրում են յաւիտենական ճշմարտութիւնը և իրենց դաժանօրէն անողորմ իրականութեան մէջ, ցաւերի բեռի տակ կռացած՝ շարունակում են հաւատալ արդարութեան յաղթանակին, շարունակում են իրենց սեփական հոգին քրքրել հասարակական ու բարոյական ամենաբարդ առեղծուածների լուծման երկունքով։ Նա շրջում էր միշտ Աստուածաշունչը թևի տակ, միշտ պատրաստ ամենակնճռոտ, ամենավերացական խնդիրների մասին վէճի բռնուել, ում հետ ուզես։ Շատ սովորական, շատ աննշան քաղաքական մեղադրանքով նա ստացել էր ամենածանր պատիժը, յանուն և ի սէր իր դաւանած ճշմարտութեան։ Դատի ժամանակ, ուր ինքն էր իր պաշտպանը, նա բացել էր իր անբաժան Աստուածաշունչը, ոտքի էր կանգնել և դատախազի մեղադրանքից յետոյ՝ իր խօսքն ասել.

— Ահա սուրբ գիրքը, պարո՞ն դատաւորներ, ասել էր նա, որին երևի դուք էլ էք հաւատում, որովհետև կարծեմ քրիստոնեայ էք։ Ես փնտրեցի, փնտրեցի այս ճշմարտութիւնների մեծ մատեանի մէջ և չգտայ ո՛չ ձեր օրէնքի յօդուածները, որոնք մարդկային ոխն ու յիմարութիւնն է թելադրել, ո՛չ ձեր դատելու իրաւունքը, որ դուք էք իւրացրել ձեզ և ո՛չ էլ իմ դէմ հանած մեղադրանքի հիմունքները, որ դուք էք յերիւրել ըստ ձեր քմայ։ Եւ որովհետև այս գրքից դուրս՝ չկայ ճշմարտութիւն, չկայ արդարութիւն, չկայ իրաւունք, ապա ուրեմն այս դատարանը „աւազակների այր է“, ինչպէս ասաց Քրիստոս և դուք սոսկական աւազակներ. հիմայ դատեցէք ինձ։

Եւ դատել էին—սովորական բերդարգելութեան փոխարէն նրան դատապարտելով իրաւունքների զրկման և ցմահ աքսորի Սիբիրում։ Մարդը դատարանից բանդ եկաւ առանց յուզմունքի, արհամարհական ժպիտը շրթունքներին և Աստուածաշունչը յաղթականօրէն թևի տակ։

Ահա այս ճշմարտութիւն որոնող կօզակն էր նստած կոյր ծերունու դէմդիմաց, բաց Աստուածաշունչի վրայ կռացած։

Ո՞վ էր ծերունի թիւրքը և ինչո՞ւ էր բանդում, չգիտեմ։ Աչքերի սև խոռոչները դիմացի պատին ուղղած, ատամներն իրար սղմած և երևի վաղուց հետև համբերութիւնից դուրս եկած, նա փնչացնում էր իր ռունգներից, կատաղաբար լսում էր այս յամառ „անհաւատի“ քարոզը, որից ըմբոստանում էր իր հաւատացեալի հոգին։ Ուզտի նման՝ իր ծալած ծնկների վրայ նստած, նա մերթ զայրոյթով ծառանում էր իր տեղում ու մերթ ցածանում, մերթ յօնքերն էր կիտում ներքին խռովքից ու մերթ ատամները կրճատում ցասումով, ապա վերստին հանդարտւում էր, զսպում ինքն իրան դառնութեան բաժակը մինչև տակը խմելու համար։ Ու այդ ժամանակ մատներով ջղաձգօրէն խառնում էր իր հինայած, կարմիր մէրուքը։

կօզակի փոյթը չէր նա ասես չէր տեսնում դիմացնի տանջանքը ու շարունակում էր իր մոլեռանդ առաքելութիւնը։ Նա ասում էր.

— Լսո՞ւմ ես մա՛շադի—ռուսները սիրում են ամեն մի թիւրքի մաշադի կոչել—լսիր Աստուծոյ խօսքը, ես քեզ ասում եմ, ճշմարտութիւնների ճշմարտութիւնն է այստեղ գրուած—ու նա ձեռքով ուժգնօրէն խփում էր առաջի հաստակազմ գրքին։

— Աստա ֆու ռուլլա (քաւլիցի), բացականչեց թիւրքը, հզօր, անպարտելի համոզմունքով ու յամառութեամբ։

— Կոյր ես էլ, մաշադի, ո՛չ միայն աչքերդ, այդ ոչինչ, ա՛յ այստեղդ է կոյր—նա մատը տնկեց թիւրքի կրծքին—ու չես կարողանում տեսնել Աստուծոյ լոյսը։

— Մուհամմեդ ռասուլ ալլահ—պատասխանեց թիւրքը այնպիսի հպարտ շեշտով, որ կօզակը մի պահ մնաց շւարած ու կանգ առաւ, սակայն իսկոյն շարունակեց։

— Լսի՛ր մաշադի, ճշմարտութիւնը Իսան բերեց աշխարհ, աչքերդ կոյր են, գոնէ թող հոգիդ տեսնի այդ ճշմարտութիւնը, ասա Յիսո՛ւս Քրիստոս, ամէն։

Սա արդէն չափազանց համարձակ պահանջ էր. կոյր ծերունին զայրոյթով ոտքի թռաւ, ձեռքերը տարածեց հակառակորդին բռնելու համար, որ խոյս տուեց նրանից Աստուածաշունչը գրկած և նրանք սկսեցին պտոյտներ գործել իրար յետևից։

— Յիսո՛ւս, Քրիստո՛ս ամէն, կրկնում էր կօզակը։

— Մուհամմեդ ռասուլ ալլահ, յամառաբար ու բարձրաձայն պատասխանում էր թիւրքը։

— Յիսուս, Քրիստոս, ամէն։

— Աստա ֆուռուլլա...

Ու չորս կողմի մեռնողների, տնքացողների, հառաչողների, ճիչ ու անէծքի մէջ մերթ լսւում էր կօզակի հանդարտ ու համոզիչ ձայնը, մերթ ըմբոստ թիւրքի հպարտ ու քէնով լի պատասխանը, որի իւրաքանչիւր հնչիւնը անսասան ու մոլի համոզմունքի շեշտ ունէր. թւում էր, թէ նա պատրաստ է աշխարհը կործանել, միայն թէ կարողանայ լռեցնել իր հակառակորդին, չլսել նրա ատելի ձայնը։

Դիւական չարախնդրութիւն էր ասես կապել իրար այս երկու արտառոց արարածներին, մէկը ճշմարտութեան հետամուտ, երազող, միւսը յաւիտենապէս կոյր և երկուսն էլ պարտուած ընկերական ախտաւոր կազմի բեռի տակ։ Եւ կեանքը—ցաւ ու արցունքի կարաւան—գնում էր իր ճամբով, թողնելով որ ճշմարտութիւնն ու կուրութիւնը բզկտեն, կրծոտեն իրար..

Մի՞թանցքի հեռաւոր ծայրից բարձրացաւ մի աղիողորմ ճիչ։ յետ նայեցի. գիտէի, որ այդ մեր թիւրք բաղնիսպանն է հեծեծում, տնքում աւագ վերակացուի ուժեղ հարուածների տակ։

„Ուրեմն ժամի տասն է“ մտածեցի տխրութեամբ, որովհետև գիտէի, որ ամեն առաւօտ ճիշտ այդ ժամին է գալիս այդ վերակացուն և միշտ նոյն տեղում, նոյն ձևով գանակոծում այդ չարաբախտ արարածին։ Կարճահասակ հաստ, կարճ պարանոցով, թուխ դէմքով, մանր աչքերով մի երիտասարդ էր թիւրքը, որ չգիտեմ ինչ աննշան յանցանքի համար դատապարտուած էր մի քանի ամսւայ բանտարկութեան. այդ թեթև պատիժն էր պատճառը, որ նա մեծ մասամբ ազատ էր քայլում ու միջանցքներում, բանդային թեթև աշխատանքներ էր կատարում. և նրան էր յանձնուած բաղնիսի հսկողութիւնը։ Աւագ վերակացուն մի ահագին անասուն էր, բարձրահասակ, թանձրամարմին, բութ ճակատով ու աչքերով, լիքը շրթունքներով մի „հին գայլ“։

Սակայն ի՞նչ էր թիւրքի յանցանքը, ինչո՞ւ էր նրան ծեծում և ամեն օր, բանդում այդ ոչ ոք գիտէր. միայն ամենքս այնպէս ընտելացել էինք այդ ծեծին, այնքան սովորել զոհի ցաւագին աղաղակներին, որ այլ ևս չէինք էլ հետաքրքրւում, գիտէինք միայն՝ որ երբ բաղնիսպանին ծեծում են, ասել է ժամի տասն է։

Արդէն լուսամուտի առաջ էի, հայեացքս դէպի ծովը ու գոհ էի, որ վերջապէս օդ եմ շնչում. երկինք գիտում ես յարաշարժ, կենդանի ծովն եմ տեսնում, երբ մօտեցաւ ինձ ծեծւած թիւրքը.

— Սպանեց, սպանեց ինձ անիրաւը, հասց նա ձախ բազուկը նորոգելով, ա՞ր դատակի վրայ մի կապոյտ լայն նշան կար։

— Ինչո՞ւ է ծեծում քեզ, հարցրի ես կարեկցութեամբ։

— Ջա՛նըմ, ի՞նչ իմանամ, ծեծում է էլի, վերակացու է, որ սիրան ուզեց կը ծեծի, ո՞վ է նրա ձեռքը բռնողը... Վնաս չունի, մեծաւոր է, սա էլ բանդ է, ծեծում է, թող ծեծի, բայց ախր Աստուած կայ վերևը, այսքան էլ ծեծ կը լինի, ամեն օրը՝ ամեն օր, ամեն օր, ոսկորներս փշրեց։

— Գնա գանգատ բանդապետին։

— Աւելի կը ծեծեն, եղաւ պատասխանը։

Կարկամուեցի, իրաւունք ունէր բանտարկեալը միայն տառապելու իրաւունքն ունի. ուրիշ ոչինչ...

***

Թիւրքը հեռացաւ միշտ դասպակը տրորելով։ Մնացի մենակ ու գոհ էի։

Գարձեալ ծովն էր առաջս, այս գեղանի ու վայրագ ծովը, ուր ալիքները ափերի մէջ սանձւած, ինչպէս մենք այս ատամնաւոր պարիսպների մէջ, եռում են, փրփրում, ոռնում ու որոտում փոթորկոտ գիշերներին, ծառանում են ու փրփուրէ բաշը ցցած, դէպի ափերն են վազում, ժայռերն ու աւազն են չանգռուտ, որպէս մեր տանջանքը մեր կուրծքը։

Այժմ նա խաղաղ էր, նրա յատակ ու խոհուն կապոյտը տարածւում էր հեռու, հեռու, ու թաքում էր անեզր, անվերջ։ Դեռ առաւօտ էր, բայց արդէն շոգ էր, ջերմ արևը ոսկէ ցոլքերով ողողել էր ջրերի միապաղաղ հարթութիւնը, որ մերթ ընդ մերթ թրթռում էր թեթև հովից, մանրիկ ալիքներ հանում և սեւազոտ

ափերին փրփուրէ անձայր երիզը փռում։ Փոքրիկ մանուկները մերկ ու կայտառ՝ խայտում էին աւազների վրայ, խխունջներ ու ճ/ճուներ հաւաքում, կամ իրար քաշքշելով ծովն էին նետում, ուր խորը չէր։ Մի պատանի յայտնուեց սրարշաւ ձիու վրայ, հասաւ ցած թռաւ ձիուց, մերկացաւ, թեթեւօրէն թռաւ ձիու մերկ թիկունքին և խոյացաւ ալիքների մէջ։ Երիվարը ջրերի մէջ ծածկուեց մինչև պարանոցը, փնչացնում էր լայն քթածակերից բարձր պահելով գլուխը և երևում էր, որ անսահման հաճոյք է ստանում գով ու գուրգուրիչ հեղուկի մէջ։ Կէսօրը մօտ էր, տօթ խեղդիչ կէսօր, երբ ծովափ հասան հինգ կանայք, կազանեան թաթարուհիներ, երեքը երիտասարդ և երկուսը տարէց, վերջինները իրենց փէշերով ու բազուկներով փոքրիկ շիրմա կազմեցին մինչև որ ջահիլները մերկացան ու ծովն ընկան, ապա իրենք էլ իրենց հերթին, հանդարտօրէն, առանց խռովքի մերկացան, արևին ցուցադրեցին իրենց մսեղ ու յոգնած, խորշոմած մարմինները և ծովը մտան։

Դէմ ու դէմս մի փոքրիկ տնակ կար հէնց ծովափին ձգուած երկար պատշգամբով, ուր մի գեռատի կին գնում գալիս էր տնտեսութեամբ զբաղուած և երկու փոքրիկ երեխաներ 5—6 տարեկան, խաղում էին մի փոքրիկ շան հետ, որին ի վերջոյ դէպի ծովը քաշ տուին լողացնելու համար։ Մայրը յետ էր կանչում, նրանք յամառում էին և շտապում դէպի ջրերը, քաշ տալով կաղկանձող շնիկին իրենց յետևից։

Հեռու մի նաւ էր գնում ծուխ արձակելով և ձկնորսական երկու առագաստանաւեր իրարից քիչ հեռու, իրենց ճերմակ թևերը փռած որպէս վիթխարի թռչուններ, հանդարտ օրօրւում էին ջրերի վրայ։ Եւ այնքան կեանք կար հեռացող շոգենաւի հպարտ ընթացքի մէջ, ալիքները ճեղքելով, ինչպէս կեանքի մի թանձրացած պատառ՝ գնում էր նա, ով գիտէ դէպի ո՞ր ափերը, դէպի ո՞ր հորիզոնները. ու նրա շարժումները՝ գիտակից, մռնչոցը՝ խրոխտ, հեքը՝ տիրական նրան դարձնում էին իրօք մի բանական արարած, ազատ ու երջանիկ, որ գիտէ ո՞ր է գնում և ինչո՞ւ։ Եւ այնքան երազ կար առագաստանաւի նազելի օրօրների, նրանց տարփոտ գրկախառնութեան մէջ ալիքների հետ, ո թւում էր թէ նրանք էլ կենդանի էակներ են, արևի ցոլքերն են վայելում և ծովի յուռթի կրծքից անասելի հրապոյրներ քաղում։

Նայում էի դէպի անծայրածիր հեռուն և հոգիս սուրում էր շոգենաւի յետևից՝ ինչպէս այն թռչունները, որոնք բաց ծովում բնազդօրէն ապաստան են փնտրում կայմերի վրայ, և սիրտս թրթռում էր ազատ, արձակ կեանքի համար, որպէս այն առագաստանաւերն ալիքների վրայ.....

— Ա՜խ կեանք...

Ես չէի. մէկը՝ կարծես իմ հոգու խորքից հառաչեց իմ գաղտնի խոհերը։

Վերև նայեցի—կողքս կանգնած էր մի երիտասարդ շղթայակիր, վտիտ, թուանալից դէմքով, թոքախտի տենդից միշտ հրաւորբոք աչքերով, միշտ գազազած ինքն իր հոգին քրքրելով, որպէս տենդն իր մարմինը։ Անունը գիտէի միայն—Գօրեաչի, բայց բնաւ չէի խօսել հետը, աւելին կ'ասեմ, չէի համարձակւում խօսել, այն աստիճան դաժան էր նրա հայեացքը, չոր ու ներվային իր շարժումները։

Գօրեաչին կանգնած էր կողքիս երևի վաղուց և ինձ պէս դիտում էր ծովն ու երազում։ Երիտասարդ էր, 25—26 տարեկան, բայց ախդէն հիւծախտով քամուած և ոտներն անզօր էին ծանր շղթաները կրել, ուստի նա քայլելիս երկու ձեռքով միշտ բարձրացնում էր և անցնում կիսախաւար միջանցքով, որպէս ստեր։

Գլուխը լուսամուտի եզրին յենած, նա նայում էր հեռուն, երազուն աչքերով ու ես ծովը մոռացած, խորհում էի այս դժբախտ երիտասարդի ճակատագրի վրայ։ Ռուսաստանի խորքերից կովկաս էր նետուել արկածախնդիր ու համարձակ խառնուածքով այդ երիտասարդը, անծանօթ երկրում իր բախտը փորձելու։ Փորձը՝ փորձանք էր դարձել, մեծ քաղաքում մի ահարեկումի առաջ բերած խուճապի մէջ բռնուել էր նա, որպէս մեղսակից և բանդ նետուել։ Անապաստան և անգործ վիճակը ծառայել էր որպէս չ'եղած յանցանքը կարելի դարձնող պարագայ և քաղաքապահ բթամիտ ու սարկահոգի ոստիկանի վկայութիւնը, որպէս անժխտելի ապացոյց և պաշտօնական վրէժխնդրութեան ու դատական անսանձ ցինիզմի այդ օրերում, դժբախտ երիտասարդը դատապարտուել էր տասնևհինգ տարուայ տաժանակիր աշխատանքի իբր ահարեկիչ։

Տէր Աստուած, ի՜նչ զարհուրելի, ամենակուլ կռօնս եղաւ ռուսական անպտուղ շարժումը լայնածաւալ կայսրութեան այսքան զաւակների համար։ Ո՞վ բանդ է ընկել այդ օրերում, նա միայն գիտէ, քանի մի իսկական յանցաւորների, (նոյնիսկ կառավարական տեսակէտով յանցաւոր) կողքին որքան շատ էին միանգամայն անմեղները, որոնք զոհ գնացին յաղթական ռեակցիայի կոյր ու բութ կատաղութեանը։

Նրանցից մէկն էր այս դժբախտ Գօրեաչին...

— Ա՜խ կեանք, կրկնեց նա, կը մեռնեմ, կը մեռնեմ, կը մեռնեմ... Նզովուած կեանք։

— Ընկեր, ասացի կարեկցութեամբ, ինչո՞ւ այդքան յուսահատուել, երբ դուք դեռ այսքան երիտասարդ էք, երբ բանականութիւնն ու առողջ տրամաբանութիւնը անզօր դառնան մեր դառն գոյութեանը յենակետ լինել, պէտք է յետին յոյս ու սփոփանք փնտրենք դիպուածի մէջ։ Երբէք չպէտք է դադարել յուսալուց, յաճախ դիպուածը ամենազօր է և իսկական փրկիչ. սովորեցէք համբերել։

— Բռնեցէք այս ձեռքը և այն ժամանակ կը դադարէք այդպէս խօսել, ասաց չոր, գրեթէ թշնամական

շեշտով իր վտիտ ձեռքը ինձ մեկնելով։ Այրւում եմ, այրւում եմ, շարունակեց նա քիչ յետոյ, կարծո՞ւմ էք միթէ, որ այս աւերը մարմինը տասնեհինգ տարի կը դիմանայ այս կիզիչ բոցերին, որ ինձ լափում են. և ինչո՞ւ համար։ Ասուած իմ։

Նրա աչքերը փայլատակեցին մի վատ կրակով և ես գրեթէ ափսոսեցի խօսքերիս համար։

— Դուք չէք ըմբռնի, ասաց նա, աւելի ցասկոտ շեշտով, բայց ուժգին հազը խեղդեց նրա ձայնը, շրթունքները ծածկեցին արիւնով, նա թքեց հեռու կարմիր հեղուկը ու շարունակեց. ոչ ոք չի ըմբռնի թէ ինչ ասել է քսանեվեց տարեկան երիտասարդի ոտներին այս ծանր շղթաները և թիկունքին պատան, կարդացե՞լ էք Անդրէևի „Եօթ մահապարտների պատմութիւնը", հաւատացնում եմ ձեզ... ա՛յ, ա՛յ, ա՛յ, այս ի՞նչ է բացականչեց նա յանկարծ, բարակ պարանոցը ձգւեց առաջ դէպի լուսամուտը. վտիտ իրանը բարձրացաւ կարծես, երկաթէ վանդակներից դուրս կախւելու համար և ես տեսայ այդ հիւծած, այդ մեռելային դէմքի, այդ խորն ընկած աչքերի մէջ այնքան ընչաքաղութիւն, այնքան մեղմ գուրգուրանք։ Գօրեաչին դուրս էր նայում, դէպի ծովը, բերանաբաց, հեւալով, ժպտուն, գրեթէ երջանիկ։

Նայեցի դէպի ծովը. լողացող կանայք էին դուրս եկել ջրից. նրանց մարմինները թրթռում էին արևի տաք շողերի տակ և վառաբախտ, հիւանդ երիտասարդը ամեն ինչ մոռացած՝ անգամ իր մօտալուտ մահը, ապրում էր իր աւերս, իր փշրուած կեանքի մի գեղեցիկ վայրկեանը։

ՏԱՐԱԳԻՐ

ՆԻՐԱՏՈՒԹԻՒՆ

«Դրօշակ»ի խմբագրութիւնը ասացել է՝

Հոնկ-Քոնկ՝ Ց. Վ. Աբգարից 60 ֆրանկ, Ժրնէվ՝ Գ. Վ.էմնանից 30, Տրապիզոն՝ Արմենակից 20, Դանիել՝ Ա. Բերբերեանից 20, Մարսէյլ՝ Վ. Ղազարեանից 40 ֆր.: Գումար 170 ֆրանկ։

ԱՋԴ

Խնդրում ենք մեր բոլոր բաժանորդներից և գործակալներից, որ շտապեցնեն 1914-ի բաժանորդագրութիւնը, այլապէս պիտի դադարեցնենք թերթի առաքումը — անգամ անհատ ընկերներին։ № 1-ը չենք ուղարկում ց՛արդ չ՛արձանագրուած բաժանորդներին։

Բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է։

Յայտնում ենք յ դիտութիւն գործակալների, որ № 1-ից սկսած դադարեցնեն հատավաճառը։ Այդ առթիւ եղած ու լինելիք բոլոր դիմումները անկատար պիտի մնան։

Խնդրւում է նոր հասցէի հետ ուղարկել նաև հինը։

Հասցէների փոփոխութիւնը ձրի է։

«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍ ՍԵՒԻԿԵԱՆ

Թեհրանում դաւաճան ձեռքով սպանւել է մեր ինտելիգենտ և լաւագոյն երիտասարդներից մինը՝ Արշալոյս Սեւիկեան։ Հարւածը՝ անսպասելի ամենքի համար՝ խոր ցաւ ու յուզմունք է առաջացրել ամբողջ հայ հասարակութեան մէջ, ինչպէս վկայում է մեր ընկերոջ համար սարքւած փառաշուք թաղումը։ Վատ ուժերը հանգիստ չեն մնում։ Յեղափոխութեան մաքուր օրերից, „Դաշնակցութեան" ձեռքով կատարւած մեծ ճակատամարտներից յետոյ՝ վրայ է հասել ռէակցիայի ու լքման մի շրջան, ուր ամեն տեսակ մութ տիպեր են հրապարակ գալիս և իրենց դաւաճան արարքներով — շանտաժ, թալան, սպանութիւն — ձգտում են անարգել, ցեխոտել երէկւայ հերոսական կռիւների և ընկած ռազմիկների յիշատակը։

Այժմեան հանդիսաւոր վայրկեանին, երբ թիւրքահայ ժողովուրդը և նրա հետ ամբողջ հայ ազգը սպասում են անձկութեամբ հայկական „գորդեան հանգոյցի" լուծումին, դեռ վխտում են մեր դժբախտ իրականութեան մէջ — Պարսկաստան, Թիւրքիա, Կովկաս — ցեղի անարգանքը ներկայացնող հերոսներ, որ հակառակորդութեան մի անբուժելի ախտով բռնւած, շարունակում են խրախուսել հակադաշնակցական դաւեր ու ոճիրներ։ Թոթովախօս, լրբենի մանուկներ են հրապարակ գալիս մի յայտնի մամուլի մէջ, որ մէկ հարւածով ջնջում են կազմակերպութեան անցեալը և դաւաճան են հռչակում նրան՝ հայ դատին ու ժողովրդին։

Դադար չկա՞յ այդ սինլքոր խուժանի համար, չկայ և վայրկեանի ընտրութեան մահոգութիւն. բայց թո՛ղ չմոռանան նրանք, որ հայ ժողովրդի պայքարը վարող և հայ մթնոլորտի մաքրութեան համար նախանձախնդիր ուժերը արամադիր չեն անվերջ համակերպելու այդ անդադրում ու տմարդի յարձակումների առջև։ Եթէ նոյնիսկ կազմակերպութիւնը արհամարհէ փոքրոգի հակառակորդներին — ինչպէս արել է յաճախ — առաջ կը գայ վերջի-վերջոյ մի հոսանք, որ կուզէ արմատական միջոցներով մաքրել որդերը, ցամաքեցնել հայկական ճահիճը։ Ճատ էլ հաճելի չէ՝ քարոզել շարունակ բոլոր տարրերի համերաշխութիւն համազգային տառապող դատի շուրջը և փոխարէնը ստանալ ամեն օր աքացիներ այնպիսի տարրերից, որոնց նւազագոյն արատը իրենց մտաւոր ու բարոյական ոչնչութիւնն է և որոնցից հայ ժողովուրդն ու հայ պայքարը բնաւ երբէք շահ չեն ունեցել։

Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ ընկեր Արշալոյսի սպանութիւնը անհատական հանգամանք չունի։ Գործը պիտի քննւի ամենայն խնամքով և չարագործի մեղսակիցները մերկացած պիտի հրապարակ գան „Դաշնակցութեան" առջև։